Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 02.11.2022թ. չորեքշաբթի թիվ 46 (1071)

Երկիր դրախտավայր

Հայկական լեռնաշխարհի կոչված մեր **բնօրրան** երկիր դրախտավայրում **Աստված** նախատեսել է մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանները: **Չորս գետերի** միջեւ տարածվող հովիտներում, որ երիզված են **Նոյյան տապանն** իրենց գագաթին պատսպարած սրբազան լեռներով, դրախտային ժամանակներում խայտացել են աշխարհիս գրեթե բոլոր կենդանիները, ու աճել մարդկությանը հայտնի բոլոր բուսատեսակների զգալի մասը...

Պտուղներով առատ մեր լեռնաշխարհն իրավամբ կարելի է կոչել նաեւ **մրգաշխարհ...** Ուրիշ էլ որտե՞ղ կարելի է հանդիպել այն օդ ու ջրին, արեւի այն ջերմությանն ու հողի բերրիությանը, որոնցով օժտված է **Հայաստան երկիր դրախտավայրը...** Եվ ուրիշ էլ որտե՞ղ կարող է մարդն ապրել երկար ու երջանիկ, եթե ոչ հենց այստեղ:

* * *

Հայաստանի՜ աշունը... Կա՞ գեթ մեկ հայ, էլ ուր մնաց թե՝ հայ բանաստեղծ, որ տողեր ձոնած չլինի հայաստանյան աշնանը... Հապա նայի՛ր շուրջդ, բարեկա՛մ, տե՛ս, թե աշունը քանի՜ երանգ է վառել՝ դեղին, կարմիր, ծիրանագույն... կթվարկե՛ս, ո՜նց չէ... Բնությունը, ասես, ծիածան է հագել... Քո երկիրը թանգարան է բաց երկնքի տակ եւ նախեւառաջ՝ Աստծո՛ ստեղծածով, որի մեջ ապրում ու չե՛ս նկատում, չե՛ս վայելում... Այդ ո՞ւր ես շտապում, մարդ Աստծո, կա՛նգ առ մի պահ, դե՛ն նետիր հոգսերդ բոլոր, մտքերդ մոլոր, վայելի՛ր այս աշունն ու այս աշխարհը, այս գույներն ու ա՛յն արեւը, որ ամեն Աստծո օր, թեկուզ աշնան մշուշի միջից, նորից ժպտալու է քեզ:

տե՛ս՝ նաեւ էջ 8-9

Կառավարություն

Կամավոր ատեստավորման արդյունքները

Կառավարության նիստում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** ներկայացրել է ուսուցիչների կամավոր ատեստավորման հերթական փուլի արդյունքները:

ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է, որ ըստ կամավոր ատեստավորման այս տարվա ծրագրի՝ գործընթացին կարող էին մասնակցել շուրջ 29.441 ուսուցիչներ (5-ից 12-րդ դասարանների բոլոր առարկայական ուսուցիչները): Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած կամավոր ատեստավորմանը մասնակցության հայտ էր ներկայացրել 3886 ուսուցիչ կամ որ նույնն է՝ շահառուների շուրջ 13 տոկոսը: Նրոնցից գիտելիք ստուգման քննություններին մասնակցել են 2300 ուսուցիչներ՝ գրանցվածների 60 տոկոսը: Նախորդ տարի հնարավոր շահառուների ընդհանուր թիվը 15.417 էր, որոնցից գրանցվել էր շուրջ 9 տոկոսը:

շարունակությունը՝ էջ 2

Համակարգ

Հրաժարվելով մրցույթի անցկացումից

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգը սահմանելու մասին»* ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը:

Կարգի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հանրակրթության մասինե օրենքում կատարված վերջին փոփոխությամբ, որով սահմանվել է ուսումնական հաստատությունների տնօրենների իրավասությունների շրջանակը: Համաձայն օրենքի 12-րդ հոդվածի՝ պաշտոնավարման ընթացքում պետական ուսումնական հաստատության տնօրենը դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների հիման վրա հինգ տարին մեկ անգամ անցնում է ատեստավորում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

շարունակությունը՝ էջ 2

Մարզական

Միայն այս տարի՝ արդեն 285 մեդալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** այսօր ընդունել է ըմբշամարտի աշխարհի Մ23 տարեկանների եւ բռնցքամարտի կանանց Եվրոպայի մեծահասակների առաջնություններում մեդալներ նվաճած մարզիկներին:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի ըմբշամարտի եւ բռնցքամարտի ֆեդերացիաների ներկայացուցիչներ, մարզիչներ եւ մարզիկներ՝ բռնցքամարտի Եվրոպայի կանանց առաջին չեմպիոն **Անի Հովսեփյանը,** բրոնզե մեդալակիր **Սոնա Հարությունյանը,** ըմբշամարտի մինչեւ 23 տարեկանների աշխարհի չեմպիոններ **Արսեն Հարությունյանը, Վազգեն Թեւանյանը,** փոխչեմպիոն **Գեւորգ Թադեւոսյանը,** բրոնզե մեդալակիրներ **Արման Ավագյանը, Հրաչյա Պողոսյանը** եւ այլք:

շարունակությունը՝ էջ 5

Նախադպրոցական

Բժշկական տեղեկանքը հաշվի է առնվելու

ՀՀ առողջապահության նախարարության հետ քննարկման արդյունքում որոշվել է փոփոխություն կատարել ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թ. հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանով հաստատված՝ *«Նախադպրոցական հաստատությունների սաների ընդունելության»* կարգում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանի** տեղեկացմամբ՝ առաջարկվող փոփոխությունը վերաբերում է կարգի այն դրույթին, ըստ որի՝ ուսումնական տարվա ընթացքում, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում սանն ազատվում է մանկապարտեզից:

Ըստ այդմ՝ նախատեսվում է սահմանել, որ առողջապահական հաստատության կողմից տրված տեղեկանքի առկայության դեպքում սաների բացակայությունների հաշվարկում չի ներառվելու տվյալ ժամանակահատվածը: Այսինքն՝ նոր փոփոխությամբ 75 աշխատանքային օրվան կգումարվեն նաեւ առողջապահական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիմքով բացակայության օրերը, որոնց համար, սակայն, եւս կսահմանվի առավելագույն ժամկետ՝ 21 օր:

Արսեն Բաղդասարյանի խոսքով՝ նախադպրոցական հաստատությունների տեղերը բավարար չեն բոլոր երեխաներին ընդունելու համար: Շատ երեխաներ այս պահին հերթագրված են եւ սպասում են նախադպրոցական հաստատություն հաճախելու իրենց հերթին. միայն Երեւանում հերթագրված է շուրջ 10 հազար երեխա:

«Ստեղծվում է իրավիճակ, երբ նախադպրոցական ծառայության մեջ ընդգրկված երեխաները փաստացի չեն հաճախում մանկապարտեզ այն դեպքում, երբ կան երեխաներ, որոնք հերթում սպասում են եւ չեն կարողանում ընդգրկվել: Տվյալ պարագայում հիվանդության հիմքով կամ որեւէ այլ պատճառով չհաճախելու դեպքում տրված էր համընդհանուր կարգավորում: Այժմ այլ մոտեցում ենք ցուցաբերելու՝ հաշվի առնելով բացակայության պատճառը»,- պարզաբանել է վարչության պետը:

Արսեն Բաղդասարյանը մանրամասնել է նաեւ, որ ՀՀ կառավարության ծրագրով նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը մինչեւ 2026 թվականը պետք է կազմի 85 տոկոս: Այդ նպատակով մինչեւ 2026 թվականը նախատեսվում է վերակառուցել կամ կառուցել 500 նախադպրոցական հաստատություն: Այս պահին 92 մանկապարտեզներում նորոգման եւ շինարարության աշխատանքներ են ընթանում, որոնցից մի մասի աշխատանքները կավարտվեն առաջիկայում:

Կ. Մ.

Կամավոր ատեստավորման արդյունքները

սկիզբը՝ էջ 1

2022 թվականի արդյունքներով կամավոր ատեստավորման փուլը հաջողությամբ հաղթահարել է մասնակիցների **66** տոկոսը, սակայն ֆինանսական ավելացումներ ստանալու են **1059** ուսուցիչներ՝

*- **30** %-ի չափով հավելավճար՝ **525** ուսուցիչ (մասնակիցների 23 %-ը),*

*- **40** %-ի չափով հավելավճար՝ **397** ուսուցիչ (մասնակիցների 17 %-ը),*

*- **50** %-ի չափով հավելավճար՝ **137** ուսուցիչ (մասնակիցների 6 %-ը):*

Ինչպես հայտնի է, հավելավճար տրվում է կամավոր ատեստավորման արդյունքում **70** եւ ավելի տոկոսը հաղթահարած ուսուցիչները: Նշենք նաեւ, որ ատեստավորված ու հավելավճար ստացող մանկավարժների դրույքաչափն ավելի վաղ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է **200 հազար** ՀՀ դրամ, որի նկատմամբ կկիրառվի հավելավճարը՝ ըստ համապատասխան տոկոսի:

Նախարար Վահրամ Դումանյանը նաեւ հայտնել է, որ 2023 թվականից սկսած ատեստավորման գործընթացն անցկացվելու է նաեւ 1-4-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների եւ դասվարների համար:

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** հորդորել է շարունակել գործընթացը եւ ուսուցիչներին քաջալերել, որ նրանք ավելի ակտիվ մասնակցեն կամավոր ատեստավորմանը:

Հիշեցնենք՝ կամավոր ատեստավորման արդյունքում՝

*- **90-100** տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, նրանց տրվում է հավելավճար՝ աշխատավարձի **50** տոկոսի չափով,*

*- **80-89** տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, նրանց տրվում է հավելավճար՝ աշխատավարձի **40** տոկոսի չափով,*

*- **70-79** տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, նրանց տրվում է հավելավճար՝ աշխատավարձի **30** տոկոսի չափով,*

*- **60-69** տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, նրանց աշխատավարձը պահպանվում է՝ առանց դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի,*

*- **0-59** տոկոս արդյունքի դեպքում ուսուցիչը ենթակա է վերաատեստավորման՝ մեկ տարվա ընթացքում:*

Նշենք, որ կամավոր ատեստավորման քննական թեստերն՝ ըստ առարկաների կազմել է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը: Թեստային առաջադրանքների միջոցով գիտելիքի ստուգումն իրականացվել է *«Մայրենի», «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ»* եւ *«Երկրաչափություն», «Բնագիտություն», «Հայրենագիտություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Ինֆորմատիկա», «Հասարակագիտություն», «Մայրենի լեզու»* (ասորերեն, եզդիերեն, քրդերեն) դասավանդող ուսուցիչների համար:

«Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաներ դասավանդող ուսուցիչների ատեստավորումը իրականացվել է ինչպես թեստային, այնպես էլ ոչ թեստային առաջադրանքների միջոցով՝ ըստ իրենց ընտրության:

Ոչ թեստային՝ գրավոր եղանակով գիտելիքի ստուգում իրականացվել է *«Նախնական զինվորական պատրաստություն», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»* առարկաները դասավանդողների համար:

Հիշեցնենք, որ կամավոր ատեստավորման արդյունքներով աշխատավարձերի 30-50 տոկոս բարձրացումը կկիրառվի հոկտեմբերից:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հրաժարվելով մրցույթի անցկացումից

սկիզբը՝ էջ 1

Ըստ առաջարկվող նախագծի հիմնավորման՝ գործող կարգով հանրակրթական դպրոցի տնօրենի ընտրության համար հիմք են հանդիսացել հավաստագրի առկայությունը եւ կառավարման խորհրդի կողմից անցկացված ընտրությունը: Տնօրենների ընտրության կարգը ներդրվել է 2010 թվականին՝ որպես տնօրեն դառնալ ցանկացողների համար որոշակի որակական նվազագույն պահանջների սահմանման եւ վերջիններիս նախնական ընտրության գործիք: Կարգի շուրջ 12 տարվա գործարկման արդյունքում կառավարման արդյունավետության եւ կրթության որակի բարելավման առումով էական արդյունք չի արձանագրել:

Գործող կարգավորումներով՝ հավաստագրված անձը տնօրենի ընտրության, նշանակման գործընթացին մասնակցելիս ներկայացնում է իր կազմած զարգացման ծրագիրը (երբեմն դրանք նաեւ կրկնություններ եւ արտատպումներ են լինում): Տնօրենի պաշտոնի հավակնորդը կառավարման խորհրդի որոշմամբ ընտրվում է հաստատության տնօրեն հարցազրույցի արդյունքում՝ շատ դեպքերում երկրորդական պլան մղելով ավելի կարեւոր բաղադրիչներ, որոնցից են, օրինակ, կառավարչական հմտությունների արդյունավետության արդյունքում արձանագրված ցուցանիշները (նախորդ զարգացման ծրագրի կատարումը, կրթության որակի բարձրացմանը միտված ցուցանիշները եւ այլն):

Նոր նախագծով առաջարկվում է տնօրենի պաշտոնավարման շարունակականությունն ապահովել զարգացման ծրագրի կատարողական ցուցանիշների հիման վրա՝ հրաժարվելով ներկայում հավաստագրման վկայականի առկայության հիմքով եւ դպրոցի խորհրդի որոշմամբ մրցույթի անցկացումից:

Նախատեսվում է, որ ատեստավորման արդյունքներով տնօրենին տրվելու է պաշտոնին համապատասխանելու մասին եզրակացություն, որը հիմք կհանդիսանա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգվելու հինգ տարի ժամկետով: Հաջորդաբար մեկ ամսվա ընթացքում, տնօրենը խորհրդին կներկայացնի ուսումնական հաստատության հաջորդ հինգ տարվա զարգացման իր առաջարկած ծրագիրը եւ դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը:

Ատեստավորման արդյունքներով պաշտոնին չհամապատասխանելու մասին եզրակացությունը հիմք է՝ տնօրենի պաշտոնավարության եւ հավաստագրի գործողության դադարեցման համար:

Ատեստավորման իրականացում

Ատեստավորվող տնօրենի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվում են՝ ըստ զարգացման ծրագրի բաղադրիչների.

- հաստատության գործունեությունը. իրավիճակի վերլուծությունը, ուժեղ եւ թույլ կողմերը,

- նպատակների եւ խնդիրների սահմանումը,

- սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների եւ միջոցառումների ժամանակացույցը,

- պատասխանատուները,

- արդյունքների գնահատման չափանիշները,

- ռիսկերը,

- գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները եւ նյութատեխնիկական պարագաները:

Բաղադրիչների գնահատման համար սահմանվում է չորս վարկանիշ

Արդյունավետ - 9-10 միավոր. *«Արդյունավետ»* գնահատվում է տնօրենի աշխատանքը, երբ նա հետեւողականորեն իրականացրել է զարգացման ծրագրով սահմանված նպատակներն ու գործառույթները եւ արձանագրել սահմանված վերջնարդյունքների կատարումը, եւ դրանց առնվազն 20 տոկոսի դեպքում ապահովել գերազանցող ցուցանիշներ: Արդյունավետ վարկանիշը նշանակում է, որ կատարումը գերազանց է, տնօրենը այս բաղադրիչով լավագույնն է:

Զարգացնող - 7-8 միավոր. *«Զարգացնող»* գնահատվում է տնօրենի աշխատանքը, երբ նա հիմնականում իրականացրել է զարգացման ծրագրով սահմանված նպատակներն ու գործառույթները: *«Զարգացնող»* վարկանիշը նշանակում է, որ կատարողականը գոհացուցիչ է, սակայն ոլորտների առավելագույնը 20 տոկոսը կատարելագործման կարիք ունի:

Բավարար - 4-6 միավոր. *«Բավարար»* գնահատվում է տնօրենի աշխատանքը, եթե նա իրականացրել է զարգացման ծրագրով սահմանված նպատակների ու գործառույթների առնվազն 60 տոկոսը, սակայն արդյունքների էական բարելավման կարիք կա: Տնօրենին կարող է առաջարկվել բարելավել մասնագիտական կարողությունները՝ մասնակցելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ նախարարություն կողմից երաշխավորված տնօրենի մասնագիտական զարգացման դասընթացներին, ինչպես նաեւ իրականացնել նախարարության կողմից մշակված բովանդակությամբ եւ ժամանակացույցով բարելավման ծրագիր :

Ոչ արդյունավետ - 0-3 միավոր. *«Ոչ արդյունավետ»* գնահատվում է տնօրենի աշխատանքը, եթե նա իրականացրել է զարգացման ծրագրով սահմանված նպատակների ու գործառույթների առավելագույնը 59 տոկոսը: Ցուցաբերած այս կատարումը պահանջում է միջամտություն: Ոչ արդյունավետ վարկանիշը ցույց է տալիս, որ զարգացման ծրագրի ձեւաչափով սահմանված գործառույթների կատարողականը անբավարար է, եւ աշխատանքում պահանջում է զգալի բարելավում: Ոչ արդյունավետ վարկանիշը կարող է հիմք հանդիսանալ տնօրենին չատեստավորելու համար:

Շահագրգիռ կառույցները եւ մանկավարժները նախագծի առնչությամբ իրենց առաջարկներն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ նոյեմբերի 8-ը:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Շնորհանդես

Կլոդ Արմեն Մութաֆյանի հերթական մեծ աշխատանքը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** այսօր մասնակցել է անվանի հայագետ, պատմաբան **Կլոդ Արմեն Մութաֆյանի** *«Երուսաղեմը եւ հայերը»* գրքի շնորհանդեսին:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան) տեղի ունեցած միջոցառմանը ԿԳՄՍ նախարարը կատարած աշխատանքի համար առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել Կլոդ Արմեն Մութաֆյանին, նաեւ շնորհավորել՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

«Պարո՛ն Արմեն Մութաֆյան, թեեւ մաթեմատիկան Ձեր առաջին մասնագիտությունն է, այնուամենայնիվ հսկայական է Ձեր ներդրումը Ֆրանսիայում հայագիտության զարգացման, ինչպես նաեւ հայոց պատմության ու մշակույթի հանրահռչակման գործում: Հատկապես մեծ է Ձեր ավանդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացում: Ձեր ջանքերով է նաեւ, որ Հայոց ցեղասպանությունն օրենսդրորեն դատապարտող առաջին պետությունը դարձավ Ֆրանսիան»,- նշել է Վահրամ Դումանյանը:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ Կլոդ Արմեն Մութաֆյանը, թեեւ իր գործունեությունը շարունակել է Ֆրանսիայում, երբեք չի դադարել հայ լինելուց եւ միշտ հավատարիմ է մնացել իր արմատներին ու հավաքական հիշողությանը, եւ պատահական չէ, որ նա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է, Երեւանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր, Մատենադարանի եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի երկարամյա բարեկամ:

Վահրամ Դումանյանը շեշտել է, որ Հայաստանի Հանրապետությունը բարձր է գնահատում Կլոդ Արմեն Մութաֆյանի վաստակը հայ մշակույթի պահպանման, հայագիտության զարգացման ու հանրահռչակման գործում եւ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի հրամանագրով Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Կլոդ Արմեն Մութաֆյանը պարգեւատրվել է *«Մովսես Խորենացի»* մեդալով:

Կլոդ Արմեն Մութաֆյանը շնորհակալություն է հայտնել պարգեւի համար եւ ներկաներին պատմել *«Երուսաղեմը եւ հայերը»* գրքի ստեղծման գաղափարի մասին: Այն նվիրված է հայկական Երուսաղեմին. *«Գրքում ներկայացված են 5-րդ դարից սկսած՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում եւ Սուրբ քաղաքում պահվող հայկական նշխարները, Երուսաղեմի տարբեր եկեղեցիներում պահպանվող հայատառ խճանկարները, Կիլիկիայի թագավորների արժեքավոր գավազաններ, պատրիարքարանում պահվող եւ Սալահ ադ-Դինին վերագրվող արտոնագիրը»:*

Հեղինակի խոսքով՝ գրքի կարեւորագույն արժանիքներից մեկը հայ ձեռագրական մշակույթի գոհարների բացահայտումն է: Այն ունի ուսուցողական եւ ճանաչողական բացառիկ նշանակություն:

Կլոդ Արմեն Մութաֆյանը նաեւ նշել է, որ պատկերագիրքը հրատարակել է միջազգային ճանաչում ունեցող *«Belle Lettre»* հրատարակչատունը:

«Երուսաղեմը եւ հայերը» գրքի շնորհանդեսին ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արա Խզմալյանը,** Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն **Վահան Տեր-Ղեւոնդյանը,** ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ **Աստղիկ Մարաբյանը:**

Համատեղ

Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը 2022 թ. նոյեմբերի 7-13-ը հայտարարում են մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում եւ հրավիրում են ՀՀ բոլոր դպրոցներին, մանկապարտեզներին, բուհերին, գրադարաններին, կրթական եւ մշակութային կենտրոններին, ինչպես նաեւ այլ շահագրգիռ կառույցներին՝ միանալու շաբաթվան:

Մեդիագրագիտության շաբաթն ամենամյա նախաձեռնություն է, որի շրջանակում կրթության ոլորտի կառույցների ու կազմակերպությունները մեդիագրագիտության միջոցառումներ ու դասեր են անցկացնում: Շաբաթվա ընթացքում կրթության շահառուները, օգտվելով առկա կրթական ռեսուրսներից, մասնակցում են առցանց եւ դեմառդեմ հանդիպումների, ինչպես նաեւ մշակում եւ իրականացնում են կրթական նախագծեր՝ հանրակրթության նոր չափորոշչին համապատասխան՝ ինտեգրելով մեդիագրագիտությունը կրթության մեջ:

Շաբաթվա ընթացքում կստեղծվեն եւ սոցիալական մեդիայում կտարածվեն կրթական ու տեղեկատվական նյութեր, մեդիագրագիտության ուղերձներ ու կանոններ #եսմեդիագրագետեմ, #մեդիագրագիտությանշաբաթ2022 հեշթեգերով:

Ինչպե՞ս միանալ մեդիագրագիտության շաբաթվան:

- Հետեւել ԿԳՄՍՆ եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (ՄՆԿ) ֆեյսբուքյան էջերին,

- Հարստացնել մեդիագրագիտության գիտելիքը՝ անցնելով «Մեդիա ւգիտություն» նոր առցանց դասընթացը,

- Ուսումնասիրել ՄՆԿ հրատարակած եւ ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված «Մեդիա ւգիտություն» ուսուցչի նոր ձեռնարկը, դրա հիման վրա իրականացնել ուսումնական նախագծեր,

- Ծանոթանալ մեդիագրագիտության այլ ռեսուրսների Media.am կայքում, դրանց օգնությամբ անցկացնել դասեր, քննարկումներ, միջոցառումներ,

- Սովորողների հետ հանդիպման հրավիրել վստահելի լրագրողի կամ կազմակերպել այց որեւէ լրատվամիջոց,

- Խաղալ մեդիագրագիտության համակարգչային եւ սեղանի խաղեր:

Մեդիագրագիտության շաբաթվա հետ կապված հարցերի դեպքում գրել Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի մեդիագրագիտության մասնագետ Լուսինե Գրիգորյանին՝ lgrigoryan@mediainitiatives.am էլեկտրոնային փոստի հասցեով:

Մեդիագրագիտությունն այն ուղեցույցն է, որ կարող է օգնել մեզ հասկանալ ինֆորմացիոն հոսքերը, ճանաչել որակյալ լրագրությունը եւ վստահելի ինֆորմացիան աղբյուրները: Հետեւելով մեր թվային վարքին՝ յուրաքանչյուրս կարող ենք փաստերի վրա հիմնված դատողություններ անել, ազատորեն քննարկել խնդիրները, ասելիքը փաստարկել՝ առանց վիրավորանքի, պիտակավորման ու ատելության՝ տուրք չտալով քարոզչական կեղծիքներին:

Կ. Մ.

«Դպրոցական սնունդ»

Ռուսաստանյան պատվիրակության այցը՝ Հայաստանի մարզային դպրոցներ

Աշխատանքային այցով Հայաստանում գտնվող ՌԴ ֆինանսների փոխնախարար **Տիմուր Մաքսիմովի** գլխավորած պատվիրակությունը շրջել է ՀՀ մարզերի մի շարք դպրոցներում՝ ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից ներդրված *«Դպրոցական սնունդ»* ծրագրի ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով:

Այցին մասնակցել են նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության քաղաքականության մշակման եւ վերլուծության բաժնի պետ **Անուշ Լալազարյանը,** ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի նախագահ **Վլադիմիր Չերնիգովը,** ՌԴ ֆինասների նախարարության ու Միջազգային ֆինանսների վարչության պետ **Պավել Սնիսորենկոն,** ինչպես նաեւ միջազգային զարգացման աջակցության բաժնի ղեկավար **Դարյա Կիրիլլովան** եւ բաժնի ղեկավարի տեղակալ **Ալինա Կրասիլնիկովան:**

Ռուսաստանի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պարենային ապահովության, մարդկային ռեսուրսների եւ համայնքների զարգացմանը միտված երկարաժամկետ ֆինանսական աջակցությամբ *«Դպրոցական սնունդ»* ծրագիրը դարձել ներառական մոդել, որն աստիճանաբար փոխանցվում է ՀՀ կառավարությանը: Հայաստանի 10 մարզերի 1-4-րդ դասարանցիները ձեռք են բերել մաքրության, հիգիենայի, բնապահպանության, առողջ սննդակարգի գիտելիքներ եւ հմտություններ:

Ռուսաստանյան պատվիրակությունը եւ ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի ներկայացուցիչները այցելել են Կոտայքի մարզի Չարենցավան եւ Տավուշի մարզի Թեղուտ համայնքների դպրոցներ, որտեղ տարրական դասարանների ավելի քան 400 դպրոցականներ ամեն օր ստանում են տաք եւ առողջարար սնունդ:

Չարենցավանի դպրոցում խոհանոցային ենթակառուցվածքների ստեղծման նպատակով կատարվել են ներդրումները, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել թխվածքաբլիթների փոխարեն երեխաների համար ապահովել տաք սնունդ:

ՊՀԾ-ն Ռուսաստանի սննդի ճյուղային ինստիտուտի (SIFI) փորձագետների աջակցությամբ մարզային դպրոցներում արդիականացվել են ճաշարանների եւ խոհանոցների ենթակառուցվածքները՝ քանդված եւ ոչ պատշաճ տեսքով տարածքները վերածելով հարմարավետ, լուսավոր եւ ժամանակակից սարքավորումներով հագեցած ճաշարանների:

Ըստ մշակված աշխատանքի մոդելի՝ դպրոցները կարող են միրգ եւ բանջարեղեն աճեցնել՝ միաժամանակ ընդլայնելով դպրոցների կարողություններն ու ծրագրում ներդնելով ժամանակակից, մաքուր եւ բնապահպանական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են կաթիլային ոռոգման համակարգերը, հակակարկտային ցանցերն ու արեւային կայանները:

Պատվիրակությունն այցելել է նաեւ *«Կենաց հաց»* ամբողջահատիկի ակադեմիա ուսուցման կենտրոն եւ հացի արտադրամաս, որոնք ՊՀԾ-ն աջակցությամբ Տավուշի եւ Լոռու մարզերի դպրոցահասակ երեխաներին ամբողջահատիկ ցորենից պատրաստված հաց են տրամադրում:

Նշենք, որ *«Դպրոցական սնունդ»* ծրագիրը մեկնարկել է 2010 թվականին՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ եւ ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի հետ տեխնիկական համագործակցությամբ: ՊՀԾ-ի նպատակն է՝ ծրագիրը լիովին ազգայնացնել մինչեւ 2030 թվականը:

2020 թվականին ՊՀԾ-ն եւ Հայաստանի կառավարությունը մեկնարկել են *«Վերափոխումների դպրոցական սնունդ»* ծրագրի նոր փուլը: ՊՀԾ-ն ընդլայնել է իր տեխնիկական համագործակցությունը ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի հետ՝ ներդնելու նոր բաղադրիչներ եւ գործողություններ: Դրանք միտված են աջակցելու Հայաստանի կառավարությանը՝ 10 մարզերում դպրոցական սննդի կազմակերպման նպատակով ներդնել բնապահպանական տեխնոլոգիաներ, այդ թվում նաեւ արեւային կայաններ, դպրոցամերձ այգիներ եւ ջերմատներ՝ ծրագրում ապահովելով դպրոցականների եւ ծնողների ավելի մեծ ներգրավվածություն:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նախագիծ

Կփոխվի ուսուցչի հերթական ատեստավորման եւ վերապատրաստման կարգը

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում փոփոխություններ կատարելու նախագիծը: (https://www.e-draft.am/projects/4844)

Ներկայացվող փոփոխությունների ու լրացումների անհրաժեշտությունը բխում է հանրակրթության բարեփոխումների շրջանակում ուսուցչին ներկայացվող՝ մասնագիտական շարունակական կրթություն ստանալու պահանջից:

«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ տվյալ ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնի նկարագրին ուսուցչի համապատասխանության որոշման նպատակով պետությունը յուրաքանչյուր ուսուցչի համար իրականացնում է հերթական ատեստավորում՝ նրա մասնագիտական չափանիշներով սահմանված զարգացման պահանջներին համապատասխան:

Ներկայացված նախագծով առաջարկվում է սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների մասնագիտական կարիքի հիման վրա վերապատրաստում իրականացնելու մասին կարգավորումները:

Ներկայում ուսուցիչների հերթական ատեստավորման վերապատրաստումն իրականացվում է նախարարության երաշխավորած կազմակերպությունների կողմից, որոնք իրենց ծրագրերը եւ մոդուլները կազմում են սահմանված չափորոշիչներին եւ ծրագրերին համապատասխան: Բոլոր հաստատությունների ուսուցիչները՝ անկախ ունեցած հմտություններից եւ կարողունակություններից, ինչպես նաեւ ստաժից, մասնակցում են նույն դասընթացներին՝ հավաքելով սահմանված չափով կրեդիտներ, որի արդյունքում համարվում եմ ատեստավորված:

Վերապատրաստումներն արդյունավետության բարձրացման նպատակով նախագծով առաջարկվում է ուսուցչի վերապատրաստումներն իրականացնել առավելագույնը երեք մակարդակում արված գնահատումների արդյունքում արձանագրված մասնագիտական կարիքի հիման վրա՝ սկսած առարկայական գիտելիքի իմացությունից: Վերապատրաստման հնգամյա ժամկետի սահմանափակումը, որն առկա էր նախորդ կարգում, չի գործելու: Սա նշանակում է, որ եթե ուսումնական տվյալ տարում որեւէ կարիքի ուղղությամբ ուսուցիչը վերապատրաստվել է, բայց հաջորդ ուստարում այլ կարիք է արձանագրվել, նա կարող է նորից վերապատրաստվել:

Վերապատրաստման իրականացումը

Յուրաքանչյուր տարի՝ սեպտեմբերին, մեկնարկում է ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքների գնահատման գործընթացը, որը պարունակում է երեք բաղադրիչ.

- Մասնագիտական զարգացման կարիքի ինքնագնահատում ուսուցչի կողմից:

- Մասնագիտական զարգացման կարիքի գնահատում ուսումնական հաստատության ներսում՝ մեթոդմիավորման եւ մանկավարժական խորհրդի կողմից:

- Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի արտաքին գնահատում եւ առկա տվյալներ (օրինակ՝ կամավոր ատեստավորման արդյունք):

Առաջարկվող նածագծով կամավոր ատեստավորումը հանդիսանում է ուսուցչի առարկայական գիտելիքի իմացության զարգացման կարիքի գնահատման ձեւ. այս դրույթն ուժի մեջ է մտնելու 2023 թ. սեպտեմբերի 1-ից:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի գնահատումը կարող է վերանայվել յուրաքանչյուր տարի՝ ուսուցչի նախաձեռնությամբ կամ կրթական քաղաքականության փոփոխության եւ լրացման արդյունքում:

Համատեղությամբ աշխատող ուսուցիչը ատեստավորման ներկայացվում է հիմնական աշխատավայրից:

Վերապատրաստման դասընթացներ եւ ժամկետներ

Ուսուցիչների վերապատրաստման մոդուլները մշակում են վերապատրաստող կազմակերպությունները՝ նախարարության սահմանած չափորոշիչների եւ ծրագրերի հիման վրա: Դասընթացներն սկսվում են վերապատրաստման մոդուլները ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատվելուց եւ վերապատրաստող կազմակերպությունների ցանկի հրապարակումից ոչ շուտ, քան երկու շաբաթ հետո:

Դասընթացները կարող են իրականացվել ինչպես ցանկի հրապարակումից հետո, այնպես էլ հերթական ատեստավորման համար սահմանված ժամկետից առաջ՝ մեկ տարվա ընթացքում: Յուրաքանչյուր կազմակերպություն կազմում է վերապատրաստում իրականացնելու ժամանակացույց՝ կախված հայտերի թվից: Վերապատրաստումն ավարտվում է ոչ ուշ, քան մինչեւ տվյալ տարվա նոյեմբերի 1-ը:

Ուսուցիչը վերապատրաստող կազմակերպությունների եւ դասընթացների ցանկից ընտրում է կազմակերպությունը եւ (կամ) դասընթացը՝ ըստ հաստատված ծրագրի բաժինների եւ մասնագիտական զարգացման բացահայտված կարիքների:

Ուսուցիչը, որպես վերապատրաստող կազմակերպություն, կարող է ընտրել իր հիմնական աշխատավայրն համարվող կազմակերպությանը միայն այն դեպքում, երբ վերջինս տվյալ առարկայի եւ տվյալ մասնագիտական զարգացման կարիքի ուղղությամբ միակ վերապատրաստողն է:

Վերջին ատեստավորումից հետո մինչեւ հաջորդ ատեստավորումն ընկած ժամանակահատվածում ուսուցիչը կարող է մասնակցել կազմակերպությունների կողմից ներկայացված եւ նախարարության երաշխավորած դասընթացներին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ուսումնական հաստատության տնօրենին:

Մասնակցելով դասընթացին՝ ուսուցիչը կարող է կուտակել օրենսդրությամբ հաստատված չափով կրեդիտներ եւ հավաստող փաստաթուղթը ներկայացնել դպրոցի տնօրենին: Այդ դեպքում ուսուցիչն իրավունք ունի չմասնակցելու վերապատրաստման ծրագրով նախատեսված համապատասխան բաժնի դասընթացին, եթե այն ամբողջությամբ համապատասխանում է վերապատրաստումների չափորոշչով եւ ծրագրով տվյալ բաժնի համար սահմանված պահանջներին եւ ուսուցչի համար բացահայտված մասնագիտական զարգացման կարիքներին:

Ակնկալվող արդյունք

Առաջարկվող նոր փոփոխություններով ակնկալվում է հստակեցնել ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումների իրականացման մեխանիզմներն ու վերապատրաստումների բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Առարկայական գիտելիքի իմացության կարիքի արձանագրման դեպքում վերապատրաստումն իրականացնելու է մասնագիտական բուհը, մնացած դեպքերում՝ երաշխավորված վերապատրաստող կազմակերպությունը՝ նախարարության սահմանած ծրագրերին ու չափորոշիչներին համապատասխան:

Շահագրգիռ կառույցները եւ մանկավարժները նախագծի առնչությամբ իրենց առաջարկներն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ նոյեմբերի 10-ը:

Ներառականությունը՝ առավել շեշտված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի նախագիծը, որը նպատակ ունի բարելավելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվող կրթական ծառայությունների որակը:

Ըստ նախագծի՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակով՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների, տարածքային եւ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից:

Աջակցության ծառայությունները տրամադրվում են չորս հիմնական ուղղություններով՝

- հարմարեցված եւ մատչելի միջավայրի ստեղծում,

- խելամիտ հարմարեցումների տրամադրում,

- կրթության մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացում,

- սովորողի անհատական ուսուցման պլանով (ԱՈՒՊ) սահմանված աջակցության ծառայությունների տրամադրում:

Տվյալների գաղտնիություն եւ կարիքի գնահատում.

Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացությունը ստանալուց հետո ուսումնական հաստատությունն ու տարածքային կենտրոնը համատեղ մշակում եւ հաստատում են սովորողի ԱՈՒՊ-ը, որով սահմանվում են մանկավարժներին եւ ծնողին տրամադրվող աջակցության ծառայությունները՝ ըստ մակարդակների:

Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եւ աջակցության ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը տարածքային կենտրոնը եւ ուսումնական հաստատությունը մուտքագրում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ: Սովորողի անձնական տվյալները գաղտնի են եւ չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ առանց ծնողի կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության:

Հաջորդաբար՝ իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ տարածքային կենտրոնի կողմից:

Գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

- սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում,

- սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում եւ գնահատում,

- կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

Գնահատման երեք փուլերի ավարտից հետո սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ տարածքային կենտրոնը կազմում է արձանագրություն եւ տալիս եզրակացություն:

Ուսումնական հաստատությունում աջակցության ծառայությունները տրամադրվում են դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից, որի կազմում ընդգրկվում են առարկայական մեթոդական միավորումների մանկավարժները, դասղեկը, ուսուցչի օգնականը, գրադարանավարը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լաբորանտը եւ երկարօրյա խմբերի մանկավարժական աշխատողները:

Տարածքային կենտրոնը խորհրդատվություն եւ գործնական աջակցություն է տրամադրում ուսումնական հաստատությանը: Սովորողի անհատական ուսուցման պլանով (ԱՈՒՊ) սահմանված խելամիտ հարմարեցումները ներառում են ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, գույք եւ սարքավորումներ, մատչելի ձեւաչափերով (տպագիր, աուդիո եւ վիդեո) մշակած ուսումնական նյութեր:

Տարածքային կենտրոնի աջակցող խումբն ուսումնական հաստատության մանկավարժների եւ սովորողների ծնողների համար մշակում եւ իրականացնում է կրթական ծառայությունների մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացման դասընթացներ ու գործնական պարապմունքներ:

Տարածքային կենտրոնն աջակցություն է տրամադրում նաեւ ուսուցիչներին եւ մանկավարժական թիմին, ինչպես նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողներին:

Հանրապետական կենտրոնը հիմնականում համագործակցում է տարածքային կենտրոնների հետ՝ աջակցության ծառայություններ ապահովելով տնօրեններին, մանկավարժական աշխատողներին եւ հոգեբաններին հետեւյալ ուղղություններովգ

- վերապատրաստումների, դասընթացների եւ սեմինար պարապմունքների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարածքային կենտրոնում տարեկան առնվազն երկու անգամ,

- տարվա ընթացքում տարածքային կենտրոնի աշխատակիցների համար խորհրդատվության կազմակերպում՝ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, եզրակացության կազմման եւ նրա ԱՈՒՊ-ի ու այլ հարցերի վերաբերյալ,

- յուրաքանչյուր տարածքային կենտրոնում տարեկան առնվազն երկու անգամ դասընթացի կամ սեմինար պարապմունքի կազմակերպում՝ խելամիտ հարմարեցումների տրամադրման, ուսումնական նյութերի, թեստերի եւ գիտելիքների ստուգման ձեւերի հարմարեցումների, դասի պլանավորման, դասավանդման մեթոդների, սովորողին տրամադրվող աջակցության ծառայությունների, ինչպես նաեւ ծնողավարության առնչվող հարցերի մասին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դիմանկարի փոխարեն

Հաջողության բանաձեւ. Քնարիկ Ահարոնյան

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն **Քնարիկ Ահարոնյանը** մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի լավագույն տնօրեններից է: Մեզ հետ զրույցում նա ներկայացրել է իր հաջողության պատմությանը. ինչպես է սկսել իր մասնագիտական ուղին, ինչպես մուտք գործել ՄԿՈՒ ոլորտ եւ կայացել այդ բնագավառում:

«Ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի «Կիրառական մաթեմատիկա» ֆակուլտետը. մասնագիտությամբ ծրագրավորող եմ: 1988 թվականի աղետալի երկրաշարժը պատճառ հանդիսացավ՝ զբաղվել այն երեխաներով, որոնք օգնության ու կրթության կարիք ունեին՝ հաշմանդամ էին, ծնողազուրկ... Ահա այսպես ներգրավվեցի կրթության ոլորտ. մի քանի երիտասարդներով փորձեցինք այդ երեխաներին համախմբել ջերմ օջախի շուրջ եւ նրանց ուշադրություն ցուցաբերել, որպեսզի ինչ-որ արհեստ կամ մասնագիտություն սովորեցնելով՝ որպես լիարժեք անդամ նրանց ինտեգրենք հասարակության մեջ: 18 տարի աշխատելով ԿԳՄՄՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն եւ ուսումնասիրելով երեխաների հետ աշխատելու փորձն ու խմբային աշխատանքը՝ խորացա հոգեբանության ոլորտում: Արդյունքում՝ 2002 թվականին պաշտպանեցի «Մտածողության զարգացումը խմբային աշխատանքում» թեզը: Երկար ճանապարհ անցնելուց հետո, սակայն, գործընկերներով հասկացանք, որ միայն արտադպրոցական կրթությունը բավարար չէ, եւ 2009 թվականին որոշեցինք հիմնել Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանը, քանի որ ունեինք դրա բոլոր հիմքերը»,- մեզ հետ զրույցում նշում է Քնարիկ Ահարոնյանը:

Ուսումնարանի եւ իր հաջողության գրավականը տիկին Քնարիկը համարում է ողջ կոլեկտիվի անմնացորդ աշխատանքը: *«Կարծում եմ, որ մեր հաջողության գաղտնիքը կայանում է նրանում, որ մենք չենք կարեւորում՝ երեխան ինչ գիտելիքներով է դպրոցից եկել ուսումնարան: Մենք յուրաքանչյուրին անհատական մոտեցում ենք ցուցաբերում, աշխատում նրա ինքնավստահության եւ մոտիվացիայի ձեւավորման վրա, որովհետեւ, եթե անձը չունենա վերոնշյալ հմտությունները, ապա կյանքում չի կարող հաջողել: Այդ նպատակին են ծառայում ուսումնարանում կազմակերպվող բազմատեսակ միջոցառումները՝ մասնագիտական, գեղարվեստական բնույթի, միջազգային, հանրապետական, քաղաքային եւ ներուսումնարանական մրցույթները: Աշխատում ենք, որ բոլորն իրենց կարողությունների շրջանակում մասնակցեն այդ միջոցառումներին, որն իր դրական արդյունքն է տվել. երեխաները չեն մեկուսանում եւ ցույց են տալիս իրենց հմտությունները»,-* վստահեցնում է ուսումնարանի տնօրենը:

շարունակությունը՝ էջ 6

Միայն այս տարի՝ արդեն 285 մեդալ

սկիզբը՝ էջ 1

Ողջունելով մարզիկներին եւ մարզիչներին՝ Վահրամ Դումանյանը նրանց շնորհավորել եւ շնորհակալություն է հայտնել քրտնաջան աշխատանքի համար. *«Ուրախ եմ՝ ձեզ այստեղ տեսնելու եւ ձեր հաջողությունների մասին լսելու համար: Հույս ունեմ եւ վստահ եմ, որ հաղթանակների շարքը պետք է շարունակվի մինչեւ օլիմպիական բարձունքներ: Այս դժվարին ժամանակներում ձեր հաղթանակները ոգեւորում են մեր ժողովրդին: Հպարտ եմ ձեզանով եւ շատ շնորհակալ եմ նվիրված աշխատանքի համար: Վստա՛հ եղեք, որ մեր հնարավորությունների սահմանում, իսկ այդ հնարավորությունները տարեցտարի ավելանում են, ձեզ համար կարվի առավելագույնը: Վստա՛հ եղեք, որ ձեր կատարած աշխատանքը գնահատվում է, եւ դուք մշտապես պետության ուշադրության կենտրոնում եք»,-* ասել է Վահրամ Դումանյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւս բարձր է գնահատել մարզիկների ելույթներն ու նրանց գրանցած արդյունքները. *«Վստահ եմ՝ ապագայում հաղթանակներն ավելի ծանրակշիռ են լինելու, քանի որ դրա համար թե՝ մարզիչների ու մարզիկների, թե՝ պետության կողմից արվում է առավելագույնը: Առաջիկայում օլիմպիական խաղերն են, ու սպասելիքները շատ մեծ են»:*

Հանդիպման ընթացքում մեդալակիր մարզիկներն ու մարզիչները ամփոփել են իրենց ելույթներն ու խոսել տպավորությունների մասին:

Մասնավորապես՝ բռնցքամարտի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանն ընդգծել է՝ տարիներ շարունակ երազել է, որ հայ մարզուհիներից մեկը կանգնի պատվո հարթակի վերին աստիճանին. *«Սա տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք է: Աշխարհի առաջնությունից հետո աղջիկներին ասացի, որ եթե հաջորդ մրցմանը ձախողվեն ու մեդալ չնվաճեն, կհեռանամ հավաքականից: Աղջիկները սկսեցին լաց լինել, ես եւս չկարողացա զսպել հուզմունքս: Շատ ուրախ եմ այս արդյունքի համար ու շնորհակալ եմ մեր մարզուհիներին: Հիմա արդեն նպատակը Փարիզի օլիմպիական խաղերին ու մեդալային պայքարին մասնակցելն է: Ոչինչ չենք խնայի եւ կանենք ամեն բան, որպեսզի հասնենք մեր նպատակին»:*

Անի Հովսեփյանի հավաստմամբ՝ դեռ չի հավատում, որ Եվրոպայի առաջնության չեմպիոն է հռչակվել. *«Շատ երկար էի սպասել մեդալին: Անբացատրելի զգացողություններ ունեցա, երբ ձեռքիս մեջ շոշափեցի ոսկե մեդալը: Շատ ուրախ եւ հպարտ եմ, բայց դեռ չեմ հավատում, որ Եվրոպայի չեմպիոն եմ»:*

Ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Հաբեթնակ Կուրղինյանն ամփոփել է աշխարհի Մ23 տարեկանների առաջնությունը, որտեղ իր մարզիկները 2 ոսկե եւ 1 բրոնզե մեդալ են նվաճել. *«Կասկածից վեր էր, որ չեմպիոնները հենց Արսեն Հարությունյանն ու Վազգեն Թեւանյանն էին լինելու: Այս առաջնությունում նրանց կարգն ու մյուս մասնակիցների նկատմամբ առավելությունը շատ մեծ էր, ու անպայման պետք է հաղթեին: Նրանք ոչ միայն Մ23 տարեկանների, այլեւ մեծահասակների մակարդակում շատ լուրջ մրցակից են ցանկացածի համար: Արման Ավագյանը լավ հանդես եկավ եւ բրոնզե մեդալի համար գոտեմարտում հաղթեց Եվրոպայի մեծահասակների գործող չեմպիոնին: Մեր թիմի մյուս ներկայացուցիչներն էլ կարող էին մեդալներ նվաճել, բայց ունենք այն, ինչ ունենք: Այս արդյունքը եւս գոհացնող է»:*

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը, ամփոփելով Մ23 տարեկանների աշխարհի առաջնության արդյունքները, նշել է. *«Թիմային պայքարում 7-րդն էինք աշխարհում, բայց մեր սպասելիքներն ավելի բարձր էին: Բավարարվեցինք 3 մեդալով՝ 1 ոսկե, 1 արծաթե եւ 1 բրոնզե: Շնորհակալ ենք ընդունելության եւ այս հանդիպման համար: Կարեւոր է զգալ, որ պետությունը եւ ղեկավարությունը կանգնած են մարզիկների թիկունքին»:*

Ազատ ոճի ըմբիշ Արսեն Հարությունյանը, ով կարիերայում երկրորդ անգամ է հռչակվել Մ23 տարեկանների աշխարհի չեմպիոն, շեշտել է, որ իրենց հաղթանակները պայմանավորված են մարզիչների աշխատանքով. *«Շնորհակալ եմ իմ մարզիչներին՝ իմ կողքին լինելու համար: Դեռ շատ երկար ճանապարհ ունենք միասին անցնելու: Ես մինչեւ վերջ կհավատամ իմ մարզիչներին եւ ուզում եմ, որ իրենք էլ ինձ հավատան, ու մենք կարողանանք իրականացնել մեր երազանքները»:*

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը տեղեկացրել է, որ վերջին տարիների պատմության մեջ առավելագույն թվով մեդալներ ունեցել ենք 2019 թվականին, երբ մեր պատանի, երիտասարդ եւ մեծահասակ մարզիկներն աշխարհի, Եվրոպայի առաջնություններում եւ միջազգային մրցաշարերում ընդհանուր առմամբ նվաճել են 222 մեդալ: 2022 թվականի ընթացքում ՀՀ մարզիկները մինչ այս պահն արդեն իսկ 285 մեդալ են նվաճել, որոնցից 100-ը՝ ոսկե. *«Այս ռեկորդները ձերն են: Այս տարվա սպասելիքները դեռ մեծ են: Շնորհակալ եմ՝ ձեր ջանքերի համար»,-* ամփոփել է ԿԳՄՍ նախարարը:

Վահրամ Դումանյանը կարեւորել է նաեւ ՀՀ կառավարության՝ մասսայական սպորտի զարգացմանն ուղղված ջանքերը՝ ընդգծելով, որ այդպիսի մրցաշարերում լավագույնը ճանաչված մարզիկները հետագայում կարող են համալրել նաեւ մեծ սպորտը:

Հաջողության բանաձեւ. Քնարիկ Ահարոնյան

սկիզբը՝ էջ 5

Հաջողության տեսակետից մեր զրուցակիցը կարեւորում է նաեւ, որ ուսումնարանում կազմակերպվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցում. հաստատությունը համագործակցում է շուրջ 65 գործատու կազմակերպությունների հետ՝ բոլոր մասնագիտությունների գծով: Քնարիկ Ահարոնյանը վստահեցնում է՝ դա նպաստում է, որ ուսանողները հետագայում աշխատանք եւ հաջողություններ ունենան: Նրա խոսքով՝ դասախոսական կազմի պատրաստվածությունը եւ մասնագիտական ճիշտ մոտեցումը եւս իրենց կարեւոր դերն ունեն այս հարցում:

Ուսումնարանի հաջող գործունեությունը, ըստ մեր զրուցակցի, պայմանավորված է նաեւ բազմաթիվ միջազգային ծրագրերի մեջ ներգրավվածությամբ: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համագործակցությամբ՝ ուսումնարանում իրականացվում է դուալ կրթություն: Հաստատության մասնագետները գործատուների հետ համատեղ մշակել են *«Խոհարարական գործ»* մասնագիտության դուալ կրթության չափորոշիչը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի եւ գործատուների պահանջները: Բացի այդ՝ համագործակցության հուշագրեր են կնքվել բազմաթիվ գործատուների հետ, որի արդյունքում՝ ուսանողները գործնական պարապմունքների հիմնական մասն անցկացնում են գործատուների խոհանոցներում:

«Փորձարկումն այնքան հաջող անցավ, որ մեր շրջանավարտները դեռեւս ուսանող տարիներից աշխատանքի առաջարկներ են ստանում: Եվ պատահական չէ, որ մեր ուսանողները գրանցել են հաջողություն՝ 2021 թվականին մասնակցելով «Բիզնես եւ կրթություն գործընկերություն» հիմնադրամի կազմակերպած «Խոհարարական գրքի ստեղծման» հանրապետական մրցույթին՝ զբաղեցնելով առաջին տեղը: Փորձնական փուլի ավարտից հետո մենք ամեն տարի դիմում ենք ԿԳՄՍ նախարարությանը՝ դուալ կրթական համակարգով այս մասնագիտությունն ուսուցանելու համար»,- փաստում է Քնարիկ Ահարոնյանը:

Ըստ նրա՝ միջազգային կառուցների հետ համագործակցության արդյունքում 2020 թ.-ին ուսումնարանում գործարկվել է բավականին մեծ ուսումնական խոհանոց, համտեսի սրահ եւ ճաշասրահ: Խոհանոց-ճաշասրահի կահավորումն իրականացվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի *«Կոլբա լաբի»* միջոցով եւ ամբողջովին համալրվել է ժամանակակից սարքավորումներով՝ GIZ-ի աջակցությամբ: *«Խոհանոցն ամեն ինչով ապահովված է եւ բոլորովին չի զիջում ժամանակակից ռեստորանների խոհանոցներին: Ուսանողներն իրենց գործնական պարապմունքներն անցկացնում են հենց այդ ուսումնական խոհանոցում: Այլ կառույցների հետ համագործակցության շնորհիվ մեզ մոտ տարբեր խմբակներ հաճախող Արցախից տեղահանված երեխաների համար ճաշի ծրագիր կարողացանք կազմակերպել. ուսանողների գործնական պարապմունքներին պատրաստածն անվճար տրվում է այդ երեխաներին: Սա, իհարկե, իր դրական արդյունքն ունի, քանի որ ուսանողները հասկանում են՝ կարեւոր նպատակի համար են դա անում, հետեւաբար իրենց աշխատանքից բավարարված են»,-* գոհունակությամբ շեշտում է մեր զրուցակիցը:

Ուսումնարանը համագործակցում է նաեւ *«Բիզնես կրթություն եւ գործընկերություն»* հիմնադրամի հետ: *«Դեռեւս 2019 թվականին Գերմանիայում մի քանի տնօրենների հետ ծանոթացանք աշակերտական ընկերությունների աշխատանքին: Հայաստան վերադառնալուց հետո այդ գաղափարը ներկայացրի մանկավարժներին եւ ուսանողներին, որոնք մեծ ոգեւորությամբ այն ընդունեցին: Եվ ահա, 2020 թվականին ուսումնարանում հիմնադրեցինք 5 ուսանողական ընկերություններ: Դրանց կարեւորությունն այն է, որ 7-8 ուսանող հավաքվում են եւ ըստ իրենց նախասիրությունների՝ տարբեր բնագավառներում իրականին մոտ պայմաններում իրականացնում գործարար ծրագրեր, ամրապնդում ձեռներեցության գիտելիքները, տիրապետում նոր հմտությունների: Նրանք կարծես իրական բիզնեսի մեջ լինեն. իրական արտադրանք են տալիս, իրական հաշվարկներ անում: Սկզբում, իհարկե, դժվար էր, բայց մանկավարժների ուղղորդումից հետո կարողանում են ուսանողական ընկերությունում իրենց թերությունները շտկել եւ ավարտելուց հետո իրենց անձնական բիզնեսը հիմնել: Մի վառ օրինակ ունենք այդ ընկերությունների հետ կապված՝ ռադիոէլեկտրոնայի բաժնի 8 ուսանողների ստեղծած ուսանողական ընկերությունը, համագործակցելով «Ֆերտի» բարեգործական հասարակական կազմակերպության հետ, շահեց ԿԳՄՍՆ ներկայացրած մրցութային ծրագրը եւ ստեղծեց վերականգնվող էներգետիկ կայան-ուսումնական լաբորատորիա, որտեղ տարբեր հաստատությունների երիտասարդների համար անցկացվում են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ: Ուսանողների ոգեւորությունն այնքան մեծ էր, որ հետագայում նրանք հետազոտեցին մարզի մի քանի համայնքների կարիքները, զրուցեցին համայնքների ղեկավարների հետ եւ «Ֆերտի» ԲՀԿ-ին ներկայացրին ենթադրամաշնորհային ծրագրեր՝ 20 տոկոս ներդրում անելով: Արդյունքում ստացան 2 մլն-ական դրամ դրամաշնորհներ եւ մարզի 4 գյուղական համայնքներում տեղակայեցին 5 կվտ հզորությամբ վերականգնվող արեւային էներգետիկ կայաններ»,-* ասում է Քնարիկ Ահարոնյանը՝ հավելելով, որ ուսանողների կողմից, սակայն, պայման է դրվել, որ կայաններից ստացվող եկամուտների որոշ մասն օգտագործվի համայնքների երիտասարդների կրթամշակութային ծրագրերի իրականացման համար: Նրա խոսքով՝ ծրագրի շրջանակում երկու գյուղական համայնքներում ստեղծվել են աշակերտական ընկերություններ…

«Այդ ընկերություններն իրենց հերթին որոշեցին զբաղվել թեյաբույսեր հավաքման եւ չորացման աշխատանքներով, իսկ մեր ուսանողական ընկերություններից մեկը, որը տոպրակներ էր պատրաստում, որոշեց փաթեթավորել դրանք: Հիմա երեխաները փորձում են վաճառել իրենց իրական արտադրանքը, որն նրանց անչափ ոգեւորում է, ինչպես նաեւ բարձրացնում ինքնավստահությունը, երբ հասկանում են, որ աշխատելու համար պարտադիր չէ բարձրագույն կրթություն ունենալ»,- շեշտում է ուսումնարանի տնօրենը:

Նրա խոսքով՝ ուսումնարանի հաջորդ կարեւոր հաջողությունն այն է, որ շրջանավարտների եւ ավարտական կուսերի ուսանողների համար ստեղծվել է սոցիալական ձեռնարկություն: Այն հիմնականում զբաղվում է հուշանվերների արտադրությամբ. ոսկերիչներն ու փայտաշմակման մասնագետները տարբեր ստեղծագործական աշխատանքներ են կատարում, նմուշներ պատրաստում, որն արդեն վերածվում է արտադրության: *«Աղջիկներն արդեն սովորել են կաշվի հետ աշխատել, որով տուփեր են պատրաստում: Նրանք իրենց պատրաստածը վաճառում են եւ, բնականաբար, աշխատավարձ ստանում: Ուսանողները նաեւ ստեղծել են անձեռնամխելի ֆոնդ, որ կա՛մ հետագայում ընդլայնեն իրենց ձեռնարկությունը, կա՛մ օգնեն կարիքի մեջ գտնվող իրենց դասընկերոջը: Այս ամենը լրացուցիչ կարողություններ են ուսանողներ համար, հետեւաբար նրանց ոգեւորությունը մեծ է»,-* հավաստիացնում է մեր զրուցակիցը՝ անդրադառնալով ուսումնարանի իրականացրած հաջորդ ծրագրին՝ ամառային դպրոցին: Դրա շրջանակում ուսումնարանը հյուրընկալում է տարբեր գյուղական համայնքների հաստատությունների ուսանողների եւ աշակերտների, որոնց փոխադարձ շփումների արդյունքում ընդլայնվում է նրանց աշխարհայացքը՝ ընդհանուր զարգացվածություն, մշակութային արժեքներ եւ այն: Այս տարի ամառային դպրոցին մասնակցել են նաեւ Արցախի երեխաները:

«Իմ բնավորությունն այնպիսին է, որ եթե որեւէ նպատակ եմ դնում իմ առջեւ, ապա հասնում եմ դրան, եւ ինձ բնավ չի վախեցնում, որ անծանոթ ոլորտ է: Ահա այդպես միտք հղացավ ուսումնարանում հիմնել ջերմոցային տնտեսություն, որի արդյունքում երկու ամիս ուսումնասիրեցի այդ ոլորտը եւ հանդիպեցի մի քանի կազմակերպությունների հետ: Ծրագրի շրջանակում նախատեսում ենք կարճաժամկետ դասընթացներ անցկացնել եւ ներդնել համապատասխան մասնագիտություն: Նախատեսվում է, որ ջերմոցային ավտոմատացված համակարգը սովորեն ռադիոէլեկտրոնիկայի բաժնի ուսանողները, որպեսզի հետագայում աշխատեն ու հնարավոր է նաեւ ստեղծեն այն, միգուցե՝ ավելի լավը: Սրանով, կարծում եմ, կզարգանան միջմասնագիտական կապերը, ինչպես նաեւ կլուծվի էկոլոգիապես մաքուր սննդի հարցը»,- փաստում է Քնարիկ Ահարոնյանը:

Անդրադառնալով մեր այն հարցին, թե որ մասնագիտություններն են ավելի հրապուրում դիմորդներին, եւ, առհասարակ, ուսումնարանի ընտրության հարցում որն է որոշիչ գործոնը, տիկին Քնարիկն ընդգծում է. *«Մենք ընդունելությունն իրականացնում ենք հիմնական կրթության հիմքով, եւ ամեն տարի ունենում ենք բաց դռների օր, որտեղ ներկայացնում ենք ուսումնարանի մասնագիտությունները: Նշեմ, որ ծնողներին նախ գրավում է մեր խստապահանջությունը եւ կարգապահությունը, ինչպես նաեւ ուսումնարանի նյութատեխնիկական հագեցվածությունը: Մեր արհեստանոցները համալրված են անհրաժեշտ գործիքներով եւ նյութերով, եւ ուսանողները դասերից հետո կարող են անհատական աշխատանք անել. վարպետները չեն զլանում լրացուցիչ օգնել: Այսինքն՝ եթե ուսանողը իրոք ցանկանում է գիտելիք ստանալ եւ աշխատել, ապա բոլոր հնարավորությունները նրա համար ստեղծված են»,-* վստահեցնում է մեր զրուցակիցը:

Նրա խոսքով՝ կարիերայի կենտրոնն ամեն տարի շրջանավարտների շրջանում անցկացնում է հարցումներ՝ պարզելու, թե ուսանողներն ինչ արդյունքի են հասել եւ աշխատում են արդյոք իրենց մասնագիտությամբ: *«Կարող եմ ասել, որ բավականին թվով ուսանողներ աշխատում են իրենց մասնագիտությամբ՝ հիմնականում սպասարկման ոլորտում, իսկ ռադիոէլեկտրոնիկա, ոսկերչություն եւ փայտի փորագրություն մասնագիտություններ ունեցողները հիմնականում զբաղվում են տնայնագործությամբ: Մեր ուսանողների 90 տոկոսը տղաներ են, որոնց մեծ մասը ավարտելուց միանգամից հետո զորակոչվում է բանակ: Վերադառնալուց հետո մասնագիտությամբ աշխատելը խնդիր է, այդ թվում՝ նաեւ սոցիալական պատճառներով, այնինչ մինչեւ բանակ գնալը նրանց մեծ մասն աշխատում է իր մասնագիտությամբ՝ հատկապես խոհարարները, վարսավիրները եւ ոսկերիչները; Վերջիններս հատկապես պահանջված են, քանի որ Գյումրիում տուրիզմը բավականին զարգացել է, հետեւաբար ավելացել է նաեւ հուշանվերների վաճառքը, եւ դա շատ է ոգեւորում մեր ուսանողներին»,-* գոհունակությամբ նշում է տիկին Քնարիկը:

Ուսումնարանը, 2014 թվականից սկսած, մասնակցում է *«Համաշխարհային հմտություններ»* միջազգային մրցույթի ազգային փուլին՝ գրանցելով հաջողություններ: Ուսումնարանի սաները *«Ոսկերչություն»* մասնագիտությամբ 2016 թ.-ին զբաղեցրել են 1-ին եւ 2-րդ տեղերը, 2018 թ.-ին եւս՝ առաջին երկու տեղերը, իսկ 2019 թվականին արժանացել են ոսկե մեդալի՝ ստանալով ոսկերչության ոլորտում Հայաստանը միջազգային մրցույթում ներկայացնելու իրավունք: 2021թ.-ին նրանք զբաղեցրել են 1-3-րդ տեղերը եւ առաջին անգամ ներկայացնելով *«Խոհարարություն»* մասնագիտությունը՝ արժանացել արծաթե մեդալի:

Քնարիկ Ահարոնյանի խոսքով՝ ուսումնարանը համագործակցում է նաեւ *«Հայկական Կարիտաս»* կազմակերպության հետ. մարզի զարգացման ուղղություններին համահունչ՝ 2022-2023 ուսումնական տարվանից կաշեգործության ոլորտում հաստատությունում ներդրվելու է սոցիալական ձեռնարկության մոդել: *«Քանի որ մեր քաղաքում չկան մեծ գործարաններ, կարծում եմ, որ հենց փոքր ձեռնարկատերերը եւ միկրո գործարանները կարող են զարգացում բերել: Միաժամանակ, «Ընտանիք» ԲՀԿ-ի միջնորդությամբ քննարկումներ են ընթանում ֆրանսիական «MISSION ENFANCE» եւ «GUILDE EUROPEENNE DU RAID» բարեգործական կազմակերպությունների հետ՝ շրջանավարտների եւ ուսանողների համար փորձարարական ծրագրով սոցիալական ձեռնարկատիրության Start-up-երի ֆինանսավորման համար: Մեր ուսանողները մի քանի ամսից կանցնեն վերապատրաստումներ, հետո իրենց ձեռնարկություններով կաշխատեն»,-* նշում է մեր զրուցակիցը՝ հավելելով՝ դեռ բազմաթիվ գաղափարներ կան, որոնք լուծման փուլում են:

Վերջիվերջո, ո՞րն է տնօրենի հաջողության բանաձեւը: *«Առաջին հերթին ես չեմ սիրում որեւէ գործի մեջ պարտվել կամ հանձնվել. ամեն ինչ անում եմ, որ հաղթող լինեմ եւ դժվարությունները հաղթահարեմ: Անկեղծ ասած՝ շատ սիրում եմ իմ երկիրը, եւ որպես անհատ՝ հայը շատ խելացի է: Ցանկանում եմ, որ մեր խելացիությունը, ազգային արժեքները, մշակույթը պահպանենք, զարգացնենք, արժեք ստեղծենք: Եթե բոլորս մեր տեղում ճիշտ աշխատենք, երկիրը կզարգանա: Այս դժվարին ժամանակներում ինչ ներշնչում եւ ուժ է տալիս հաջողությունը. միայն ջանքեր գործադրելով է հնարավոր հաջողության հասնել: Ես ինձ երջանիկ եմ զգում, երբ տեսնում եմ, որ ուսանողը ժպիտով է մտնում դասասենյակ եւ տարիներ հետո վերադառնում ու հետադարձ հայացք գցելով՝ մեզ շնորհակալություն հայտնում»:*

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գրականագիտական

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ նախորդ համարում

1920, 10 օգոստոս – Թիֆլիսում ստորագրվում է հայ-ռուսական համաձայնագիր:

1920, 10 օգոստոս – Հատուկ պատրաստված ոսկեծայր գրիչով Փարիզին մերձակա Սեւր քաղաքում Ավետիս Ահարոնյանը ստորագրում է Անտանտի երկրների հաշտության պայմանագիրը սուլթանական Թուրքիայի հետ, որով Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի, Վանի նահանգներից, դեպի ծով երկու ելքով Հայաստանի Հանրապետությանն էր անցնում 90. 000 քկմ տարածք, եղածի հետ կազմելով 161.300 քկմ:

Մեռնող Օսմանյան ինքնակալության հետ կնքված պայմանագիրը Քեմալական Թուրքիան չի ընդունում: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի ձեռքով գծված քարտեզի ոգեւորությունը մնում է թղթի վրա եւ մարում-մոխրանում 1920 թ. հուլիսի 21-ից Օլթիի ուղղությամբ ներխուժած Կարաբեքիրի շարունակական եւ ավերիչ արշավանքների մահաբեր խորշակից:

Մինչ Երեւանում հանդիսավոր պայմաններում նշում էին Սեւրի հաշտության պայմանագիրը, մինչ հնչում էին համախմբումի եւ հայրենիքի պաշտպանության կոչեր, թշնամին արդեն բախում էր մայրաքաղաքի դռները: Թուրքիան նախապատրաստվում էր նոր ծանր հարվածների: Ամեն ինչ մնաց թղթի վրա: Նորից հօդս ցնդեց հայոց երազանքը:

1920, 14 օգոստոս – Գնդակահարության են դատապարտվում Մայիսյան ցույցի կազմակերպիչներ Ստեփան Ալավերդյանը, Սարգիս Մուսայելյանը, Բագրատ Ղարիբջանյանը…

1920, 15 օգոստոս – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 15) լույս է տեսնում Դավիթ Անանունի *«Կույր տարերքը (Եղիշե Չարենց՝ «Բոլորին, բոլորին, բոլորին», երեք ռադիոպոեմ)»* գրախոսությունը:

Մեջբերելով *«Ե՛ս – ես եմ նորից. – // Ոսկի երակը հնամյա ցեղիս…»* հատվածի ինը տողը՝ գրում է. *«Սա ինքնահանձնարարումն է եւ միաժամանակ խոստում: Բանաստեղծի տաղանդի մասին չխոսենք: Անունդ սունկ ես դրել՝ մտիր կողովը: Մենք դեռ կսպասենք, որ «հսկա պոետը» արդարացնի իր շալակած հորջորջումը: Միայն տեսնենք, թե այս ռադիոպոեմների մեջ գործնականում իրագործե՞լ է իր խոստումը, այսինքն, պատկերել է «երկաթակուռ, նո՛ր, հզո՛ր աշխարհ»:* Ո՛չ, նա այդ չի արել: Ինչո՞ւ: Որովհետեւ Եղիշե Չարենցի հոգին փոթորկում է կույր տարերքը, տրամադրությունը, մշուշապատ սպասումը եւ ոչ պայծառ իմաստությունը, որ նրան իրավունք տար *«հավերժատես»* կոչելու իրան: <…>:

Այս պոեմի մեջ կա սպառնալիք, կա մխիթարություն, հավատ եւ հուսադրումն, կա նույնիսկ ուժի ու հաղթանակի զգացումն, բայց այդ բոլորը իբրեւ տրամադրություն, որ չի պարզում, թե հանուն ի՞նչ գաղափարի է արտահայտվում այդքան հուզմունքը: Հանո՛ւն *«Կարմիր ապագայի»*: Բայց ո՞րն է այդ *«Կարմիր ապագայի»* չասենք բովանդակությունը, այլեւ նրա թափորի ուղիղ շավիղը: <…>:

Ռուսական հեղափոխությունը զոհ գնաց կույր տարերքին: Նա բարձրացրեց ժողովրդական հատակի դիրտը, պղտորեց սոցիալիզմի անապական լիճը եւ կենդանական բնազդը հայտարարեց աշխարհաշեն գործոնե:

Չարենցի ոգեւորության թափը համարում է *«կույր տարերքի արդյունք»*:

«Եղիշե Չարենցի խնկարկությունը տարերքին քիչ ուրախություն է պարունակում իր մեջ: Բավ չէ աղաղակել Մեսիայի գալստյան մասին, պետք է ճանաչել նրան: Այդ ճանաչելու ցանկությունն է, որ պակասում է հեղինակին եւ նրա հետ շատ շատերին մեր տրամադրությամբ ապրող նորագույն սերնդից: Լավ է կույր լինել աչոք, քան կույր մտոք: Լավ է հրաժարվել տարերքից եւ նրա մատակարարած ոգեւորությունից, քան թե խակ գիտակցությամբ առաջնորդ կանգնել ժողովրդական բազմության: Մենք պետք է ազատագրվենք կենդանական բնազդից, այլ ոչ թե ջերմացնենք այն:

Եղիշե Չարենցը հսկա չէ, բայց տրամադրում է չհաշտվել ճահճացած իրականության հետ: Եթե անհրաժեշտությունը զուգորդի պայծառ իմացությանը «Կարմիր Ապագայի» ուղիների մասին, այն ժամանակ կարելի կլինի ասել, որ մասսայաշարժ տարերքը դառնա փրկության խարիսխ ճնշումից եւ շահագործումից: «Կարմիր Ապագայի» նվաճման համար պահանջվում է, որ ոգեւորությունն ու գիտակցությունը անբաժան լինեն պայքարի դաշտում: Մեկը առանց մյուսի անզոր է: Եղիշե Չարենցը պարտադրում է առաջին բարեմասնությունը: Թող ընթերցողը ոգեւորությունից ու զգացումից անցնի երկրորդ բարեմասնության եւ գոտեպնդվի այն հաստատ համոզմունքով, որ «Կարմիր Ապագան» լոկ բանաստեղծական պատրանք չէ, այլ գոյավիճակ է, որ դարբնվում է համառ աշխատանքով»:

Մինչդեռ՝ դա Չարենցի արյան եռքն էր՝ խելագար ու բորբոքված, վառվռուն ու երակներից հորդող, նման կարմիր նժույգների վազքին, որոնք նրան մատնել էին անքնության եւ հոգու մեջ դոփում էին քառատրոփ հարվածներով:

Չարենցի ստեղծագործության մեջ աննկատ ներծծվում են թե՛ ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ստեղծված ժողովրդական-ֆիդայական երգերի ձայները, թե՛ համաշխարհային մեծ տեղաշարժերի կշռույթները:

1920, օգոստոսի կես – Երեւանի զբոսայգում (բուլվար) ամերիկյան հինգերորդ մանկատան որբ Մահարին տեսնում է իր նման արեւածաղկի սերմ չրթող Չարենցին, ում ստեղծագործությանը ծանոթ էր: Իմանում է, որ պաշտոնավարում է տղաների որբանոցում, կառավարիչի միջնորդությամբ ծանոթանում է նրա հետ: (տես՝ Դ. Գասպարյան, *«Գուրգեն Մահարի»*, 2013, էջ314): Սկսվում են նրա ու ապագա Ն. Չարյանի հաճախակի այցելությունները Չարենցին: Որբանոցների պատերից դուրս զբոսնում էին ու զրուցում: Չարենցը նրանց կարդում է իր նոր գործերը *«Ողջակիզվող կրակ»* շարքից: Զրույցների ընթացքում ասում է. *«Ի՞նչ գազելի վախտ է… Հիսուն գազել էի գրել, հիսունն էլ վառեցի… Ուրիշ բան է հարկավոր հիմի <…>: Գազելն ի՞նչ է որ… մեկ է թե՝ սպիչկա վառես, գցես…»* (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 121):

Այլեւայլ հարցերի հետ անդրադառնում են նաեւ արեւմտահայ պոեզիային: Շատ բարձր է գնահատում Մեծարենցին՝ *«մքուր, ոնց որ բյուրեղ»*, Յարճանյանին՝ *«Ի՜նչ տաղանդ է, զարամանալի, ամեհի արվեստով»*, համանման արտահայտություններով մեծարել է Դուրյանին, Զոհրապին, Վարուժանին, Թեքեյանին: Արտասանել է նրանցից ամբողջական գործեր, առանձին հատվածներ ու տողեր եւ ասել՝ ա՛յ, թե ինչպես պետք գրել: Սխալ է, թե Վարուժանին չէր սիրում:

Իրեն տեսել է հայ պոեզիայի ոսկե շղթայի մեջ՝ Հովհաննիսյան-Թումանյան-Իսահակյան- Տերյան-Չարենց: *«Չլիներ Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը Թումանյան չէր լինի, ոչ էլ՝ Իսահակյանը՝ Իսահակյան: Եթե չլիներին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը՝ Տերյանը Տերյան չէր լինի: Չլիներ Տերյանը ես՝ ես չէի լինիե («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»*, 1961, էջ 184):

Անդրադառնում են որբանոցային սերունդի բանաստեղծներին՝ Վեսպեր (Մարտիրոս Դաբաղյան), Ոստանիկ (Հովհաննիսյան), Ֆենիքս (Օննիկ Մխիթարյան), Նաիրի Զարյան (Հայաստան Եղիազարյան), Հենրի Գաբրիելյան, Գեւորգ Պարիս (Պարոնիկյան), Վաղարշակ Նորենց (Երիցյան), Ալազան (Վահրամ Գաբուզյան), Սարմեն (Արմենակ Սարգսյան)… Քննարկման նյութ են դառնում նաեւ Արմենուհի Տիգրանյանը, Վարսենիկ Աղասյանը…

Չարենցի *«Սոմա»*-ի, *«Ամբոխներ…»*-ի, ռադիոպոեմների ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ Մահարին այսպիսի խոստովանություն է անում. *«Հեղափոխությունը ես Չարենցով ընդունեցի այն ժամանակ»* (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 118):

Մահարին արդեն բանաստեղծ էր. 1917-1920 թվականներն առանձին շրջան են նրա ստեղծագործության մեջ, որ ունի իր հստակ ձեւակերպումը՝ արեւմտահայերենի շրջան: Արեւմտահայ պոեզիայի լավագույն ավանդույթների շարունակողն էր. գրում էր ոչ միայն բանաստեղծություններ, այլեւ հրապարակագրական հոդվածներ ու գրախոսություններ եւ անգամ *«ձեռքի հետ»* հասցրել էր անդրադառնալ *«Հրազդան»*-ում (1917, Թիֆլիս) տպագրված Չարենցի *«Հեռացումի խոսքեր»*-ին. *«Չարենցի ոտանավորը վատ չէ»* (*«Վան-Տոսպ»*, 1918, թիվ 10, 1 ապրիլ): Այսքա՛նը: Այստեղ նաեւ Վշտունին է իր հանգակապության տարերքով եւ արժանի քննադատությամբ: Անդրադառնալով նրա *«Կ'աղոթեմ»* բանաստեղծությանը՝ Մահարին շարունակում է. *«…սա մոլեռանդ հանգապաշտ է, իր բոլոր արտադրությունները գերի են հանգերուն»* (նույն տեղում):

Այս տարիներին Մահարին առատորեն տպագրվում էր «Աշխատանքե, *«Վան-Տոսպ», «Հայաստանի ձայն», «Հորիզոն»* պարբերականներում, եւ Չարենցի հետ գրական բարեկամությունը շատ բանով կանխորոշեց նորագույն պոեզիայի ձեւավորման ու կայացման ընթացքը:

Իսկ Չարենցի հետ հիշարժան հանդիպման արձագանք է «Հայաստանի ձայնե-ում չարենցյան նվիրումով՝ *«Ե. Չ-ին»*, ու ազդեցությամբ գրած ու տպագրած *«Եվ հայրենիքում ավազաշխարհի…»* (հատված *«Օրերը մեր կապո՜ւյտ, կապո՜ւյտ առասպել» պոեմից»*) գործը (1920, թիվ 18, 22 օգոստոս):

Չարենցի հետ ծանոթությունը Մահարին հիշում է մե՛կ 1919 թվին, մե՛կ՝ 1920. *«Գրի էի առնում իմ 1919 թվի հուշերը նրա մասին…»* (*«Չարենց-նամե»*.- *«Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»*, 1961, էջ 158): Մեկ այլ առիթով. *«Չարենցի անունը պայթեց ռումբի նման: Դասախոսությունից հետո ես մի շաբաթ կարողացա ապրել բերված ցիտատներով, հետո սկսեցի որոնել գրքերը»* (*«Եղիշե Չարենց»*.- *«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 116). այսինքն՝ 1919-ի հոկտեմբերի 16-ին Մահարին մասնակցել է Աղբալյանի դասախոսությանը, եւ քանի որ Չարենցը Երեւան է եկել 1920-ի հունվարին, ուրեմն ծանոթությունը կայացել է դրանից հետո՝ 1920 թ. ամռանը:

1920, 17 օգոստոս – Դավիթ Անանունին հասցեագրած նամակում Չարենցը հայտնում է՝ հիվանդությունից կազդուրվելու նպատակով մեկ շաբաթ կլինի, որ տեղափոխվել է Քանաքեռ, որտեղից Երեւան կվերադառնա 10-15 օրից (տես՝ ԳԹ, 1979, թիվ 33, 17 օգոստոս; ԱՉԵ, էջ 451-453):

1920, 19 օգոստոս– Քանաքեռից Չարենցի նամակը Դավիթ Անանունին. *«Շատ ցավում եմ, որ իմ «Սկյութացոց երգը» [«Աթիլլա»] Ձեզ դուր չի եկել: <…>: Կգամ եւ հաճույքով կլսեմ, թե ինչո՞ւ է այդ չարաբախտ երգը պակասավոր»* (ԳԹ, 1979,, թիվ 33, 17 օգոստոս; ԱՉԵ, էջ 451-452; մարտ ամսով թվագրված այս նամակը հավանական է գրած լինի օգոստոսին):

1920, օգոստոս – Երեւանում Լեյլիի իր ալբոմում բալլադներից առաջ գրում է *«Չորս տող Լեյլիի համար»*.

Ում որ սրտում երգս հնչի քաղցր, ջինջ–
Հիշի՛ թող նա, որ աշխարհից անցնելիս
Չարենցն ասավ՝ այս անիծված աշխարհում
Երանի ոչ մա՛րդ լինեի, ոչ երգիչ… (ԵԺ, I, էջ 323):

Լեյլին (Փառանձեմ Սահակյան – Տեր-Մկրտչյան, 1892-1951) ավարտել է Թիֆլիսի Հովնանյան-Գայանյան օրիորդաց միջնակարգ դպրոցը: Ծնողները Թիֆլիս էին տեղափոխվել Ղարաքիլիսայի Չորագյուղից: Հանրապետության տարիներին եւ հետո եղել է Հայաստանի ներկայացուցչության քարտուղարը Վրաստանում, որ նշանակում է մոտիկից տեղյակ էր քաղաքական իրադարձություններին: Տերյան-Չարենց ազդեցությամբ գրական փորձեր էր անում, որոնցից *«Փողոցները մարդաշատ»* բանաստեղծության վրա Չարենցը գրել է *«Шедевр! Шедевр! Шедевр!»*: Զբաղվում էր ռուսերենից հայերեն թարգմանությամբ: Հետագայում հաստատվում է Մոսկվայում:

1920, 11 սեպտեմբեր – Նամակ Երեւանից Թիֆլիս Գարեգին Լեւոնյանին. *««Գեղարվեստ»-ի առաջիկա համարի համար ուղարկում եմ հինգ բանաստեղծություն «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքից, կարծում եմ, որ նրանք արժանի են «Գեղարվեստ»-ին»:*

1920, 15 սեպտեմբեր – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 17) *«Բրոնզե գրքիգ»* խորագրով տպագրվում է *«Աստղիկ»* բանաստեղծությունը:

1920, 16 սեպտեմբեր – *«Սոմա»* եւ *«Ամբոխները խելագարված»* գրքերը Երեւանում ընծայագրում է Լեյլիին՝ *«Լեյլիին - Չարենց»*: *«Սոմա»*-ի վրա սեպտեմբերի 17-ին գրում է *«Շամիրամ»* բանաստեղծությունը, նույնը՝ նաեւ Լեյլիի ալբոմում: *«Ամբոխները խելագարված»*-ի վրա սեպտեմբերի 18-ին գրում է *«Անկումների սարսափից»* բանաստեղծությունը, նույնը՝ նաեւ Լեյլիի ալբոմում:

1920, 16 - 23 սեպտեմբեր – Երեւանում Լեյլիի ալբոմում գրում է *«Փողոցային պչրուհուն»* (Յոթը բալլադ) շարքը եւ ազգային ողբերգության դեմ հանդիման վերջին՝ *«Խեղկատակ»* բանաստեղծության մեջ ոչ թե ասում, ոչ թե բղավում, այլ ճչում է՝ *«Ես խեղկատակ եմ հիմա»*: Տպագրվել է ԵԺ, I հատորում (1922): Լեյլիի ալբոմում 1921 թ. հուլիսի 8-ին Թիֆլիսում գրել է նաեւ *«Մեսալին»* հրաժեշտի բալլադը:

«Փողոցային պչրուհուն» շարքը հոգու ամոքման մի հերթական փորձ է: Անմիջական անցումով սալոնային Գեղանի Տիկինը փոխարկվում է փողոցային պչրուհու:

շարունակությունը՝ էջ 10

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Աշուն

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ
Փըչում է քամին,
Քշում է տանում
Տերեւը դեղին:
Տըխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

***

Պա՜ղ-պա՜ղ փըչեց աշնան քամին,
Ուռիները դող առան.
Տերեւները՝ չոր ու դեղին
Տխո՛ւր, տխո՛ւր վար ընկան:

Մենակ ագռավն ծառի ճյուղին
Լուռ ծըվարեց սեւ հագած.
Ա՜խ, մեկ էլ ես ձեռըս ծոցիս՝
Աչքըս ձեր դըռան մնաց:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Քամին

Քամին,
Աշնան քամին
Թռցնում է դեղին նժույգները իրա:

Ինչ-որ մի տեղ հիմա
Հավաքել է ի մի
Ու փչում է աշնան հոգեվարքի ժամին
Իր ահռելի հոգին մի վիթխարի բերան:

Քամին,
Աշնան քամին
Հռնդում է հիմա.
Փոշու հսկա դեզեր փախցընում են իրար
Սարսափահար դարձած նախիրների նման:

Քամին,
Աշնան քամին...
Քաղաքը գորշ ու մութ:
Ամեն անցորդ դեղին զառանցանք է հիմի՛,
Որ իրիկվա մեգին երազվել է քամուն:

Փողոցները երկա՜ր,
Ու ծանձրալի, աշնան անձրեւների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժա՜ն, անհրապույր, չարկամ,-
Որքա՜ն, որքա՜ն, որքա՜ն ահավոր են հիմա:

Քամին,
Աշնան քամին
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի:
Ու կարող է հիմա ամե՜ն արգելք քանդել
Քամին,
Աշնան քամին...

Հռնդում է,
Փնչում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Զրնգում են ահից պատուհաններն հնչուն,
Ու թռչում է քամին,- երկաթաթեւ թռչուն,-
Զարհուրելի, զազիր փողոցների միջով...

Խելապտույտ, անմարդ փողոցներում կորած,
Զարհուրելի ոխով ու զայրույթով իրա,
Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ,
Հայացքներում՝ փոշի եւ արնամուժ ավազ,-
Քամին, աշնան քամին հարձակվում է ահա
Անօգնական կքած բուլվարների վրա:

Օ՛, բուլվարի հիվանդ ծառերը որբ ու խենթ,
Ցնցոտիներ հագած պառավների նման,-
Ծվատում են նրանք դեղին մազերն իրենց,
Գլուխները ցնցում ու մորմոքում հիմա:

Ծառերը ծե՜ր, հիվա՜նդ,
Ծառերը ծուռ ու չոր,
Մուրացկանի նման ծառերը խեղճ ու մերկ.
Քամին ծեծում է ծեր գլուխները նրանց
Ու ճչում է մահվան չարագուշակ ճչով.-
Երբե՜ք,
Երբե՜ք,
Երբե՜ք...

Օ, գթացե՜ք հիմա.
Այդ ծառերին՝ խաչված բուլվարներին ամա,
Օ, փրկեցե՜ք նրանց հարվածներից քամու,
Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ:

Օ, գթացե՛ք հիմա.
Լսե՜ք, լսե՜ք, լսե՜ք.-
Այս ահռելի, դաժան, հոգեվարքի ժամին՝
Պիտի դառնա, որ ծեր հոգինե՛րը խուժե.-
Քամին,
Աշնան քամին...

Վահան ՏԵՐՅԱՆ

Աշնան

Նորից անձրե՜ւ, մշո՜ւշ, ա՜մպ,
Թախի՜ծ անհուն, տխրա՜նք հեզ,
Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Քո մշուշը, քո ոսկի
Տերեւները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վհատությանն իմ խոնարհ
Եւ թփերը դողդոջուն
Եւ խոտերը գետնահար...

Եւ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է, կարծես,
Աշո՛ւն, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Համո ՍԱՀՅԱՆ

Աշուն

Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եւ հրաժեշտ է ասել
Կռունկը մեր աշխարհին:

Բարդին էլ չի սոսափում
Արագիլի թեւի տակ,
Դեղին թերթեր է թափում
Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարույկ է կարծես
Ծեր տանձենին անտառի,
Թվում է, թե մոտ վազես,
Ձեռք ու ոտքդ կվառի...

Քամին շատ էր թափառել,
Պարապ-սարապ, թեւը կախ,
Բայց արդեն գործ է ճարել,
Տեսեք, ինչքան է ուրախ:

Տեսեք, ինչպես է խաղում
Տերեւների հոգու հետ,
Նրանց վրա ծիծաղում,
Քշում առաջ, բերում ետ:

Մերթ մինչ երկինք է հանում,
Խառնում խոնավ ամպերին,
Մերթ դեպի ձորն է տանում
Փռում գետի ափերին:

Ծափ է տալիս ու պարում,
Գնում, գալիս... մի խոսքով,
Զուգում է եւ զարդարում
Ճանապարհները ոսկով:

Բլրի վրա, քարափին
Ամպի ստվերն է դողում,
Ու գնում ենք, մեր ճամփին
Աշնան ոսկին է շողում:

Ոսկե ծովում այդ դեղին
Աշնան հերկերն են ծլում
Եւ ամպերից արեւի
Վերջին շողերն են խլում:

Տարածվում են դաշտով մեկ,
Բռնում ձոր ու սարալանջ...
Նրանք աշնան ոսկու մեջ
Գարնան ծիծաղն են կանաչ:

Գուրգեն ՄԱՀԱՐԻ

Չարենցի հետ

Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես խշշում էր աշունը,
Ձմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Բուլվարի ծառերը խշխշում էին,
Բուլվարը նման էր հիվանդի:

Մեր հոգնած երակների խողովակներով
Փչում էր աշնան քամին ցրտացուրտ,
Նա մերթ հեկեկում էր աղիողորմ
Ու մերթ էլ կատաղի ցնցում:

Նա ծվատում էր մացառ ու թուփ,
Հեկեկում խուլ ու տրտմաթախիծ,
Ամայի անտառում ու դեղնած դաշտում
Փնտրում էր գոնե մի ծաղիկ:

Անտառի տերեւներն էին խշխշում,
Մահանում դաշտերն ընդարձակ.-
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես՝ աշուն էր, ինչպիսի՜ աշուն,
Ամառը որքա՜ն շուտ անցավ:

Շուտ անցավ ամառը.- նա միրգ էր ու հասույթ,
Նա հասուն օրերի բեղո՜ւն նախօրե,
Բայց եկավ աշունը, եկավ թաց ու մահացուրտ.-
Օրեր իմ, օրեր իմ, օրե՜ր...

Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես,- խշշում էր աշունը,
Ձմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Երգերի ծառերը խշխշում էին,
Ծառերը նման հիվանդի:

Վահան ԹԵՔԵՅԱՆ

Կ՚անձրեւե, տղաս

Կ՚անձրեւե, տղա՛ս... Աշունը թաց է,
Թա՛ց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...
Պատուհանն ու դուռը գնա գոցե
Եւ դեմըս եկո՛ւր նստիլ վեհագույն

Լռության մը մեջ... Կ՚անձրեւե, տղա՛ս...
Կ՚անձրեւե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,
Կը մսի՞ սիրտըդ, եւ կդողդըղա՞ս՝
Խորհելով պայծառ արեւին անցյալ,

Դռան մը ներքեւ գո՞ց ճակատագրին...
Բայց կուլաս, տըղա՛ս... Մութին մեջ հանկարծ
Ծանըր արցունքներ աչքեդ կը գլորին...

Լա՛ց անմեղության արցունքը անդարձ,
Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգետ տղա՛ս,
Խե՞ղճ որսը կյանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս...

Վահագն ԴԱՎԹՅԱՆ

***

Աշնան բարակած ջրերը լալիս,
Աշնան ոսկին են իրենց հետ տանում,
Ու դուք, կռունկներ, անհայտից գալիս,
Դեպի անհայտն եք նորից հեռանում:

Կապույտ լույսով է հեռուն բռնկել,
Քամին մենավոր մի ծուխ է բեկում,
Ու ձեր կանչի մեջ, չվող կռունկներ,
Ինչ-որ կարոտ է անվերջ հեկեկում:

Այնպես խաղաղ են երկիր ու երկինք,
Ամպերը այնպես ճերմակ ու թեթեւ,
Ու թվում է, թե բարդիները ձիգ
Ուր որ է պիտի սլանան եթեր:

Բայց աշնան բարակ ջրերը լալիս,
Աշնան ոսկին են իրենց հետ տանում,
Ու դուք, կռունկներ, անհայտից գալիս,
Դեպի անհայտն եք նորից հեռանում:

Կապույտը կտրած գնում եք անվերջ,
Ու աշնան ձեր չուն նման է լալու...
Ինձ էլ տեղ պահեք ձեր երամի մեջ,
Կռունկներ, շուտով ես էլ եմ գալու...

Միսաք ՄԵՇԱՐԵՆՑ

Հովը

Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Չարաճըճի, ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դըրան ետին մոռցըված՝
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին:

Իր ետեւեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն ու հոգնած.
Ինք խույս կու տա իմ գրգանքես, թեւերուս
Պարապանդումն է դատարկ.
Բայց ա՜նառակ՝ երկու ձեռքես կը փախչի,
Մինչ ետեւեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն եւ հոգնած:

Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ,
Մինչեւ անտա՛ռն իսկ կ՚երթամ.
Բայց ամենուն կրնա ընել ինք դարպաս.
Թուփին, ջուրին, տերեւին.
Ու լըճակին գիրկը կ՚իյնա, կամ տեսնես
Ծառին կատարն է թառած:

Մանուկի պես կը պլլվի երբեմն ալ
Մայր թուփերու քըղանցքին.
Եւ երբ զինքը կը կանչեմ ես սրդողած՝
Կը քրքըջա ինք անդին:
Շա՛չ, ապտակ մը կը զարնե մերթ երեսիս,
Նույն վայրկյանին կը փախչի,
Եւ ես ի զո՜ւր կ՚իյնամ նորեն ետեւեն,
Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ՝
Մինչեւ անտա՛ռն իսկ կ՚երթամ...

Եւ երբ հուսատ կը հեռանամ թիկնադարձ,
Կռնակես վե՞ր կը մագլի,
Կամ մազերըս կ՚ուզե համրել, կամ հանկարծ
Ուժգին մեջքիս կը փարի:

Եւ երբ ցասկոտ նորեն ետիս ես դառնամ՝
Վաղո՜ւց փախեր է արդեն,
Ու չորս կողմըս կ՚ավրըշտըկե ու վարդեն
Կ՚առնե անոր սակավարյուն շափրակներ.
Ու, դարձյալ՝ երբ կը հեռանամ թիկնադարձ՝
Կըռնակես վե՞ր կը մագլի...

Պարույր ՍԵՎԱԿ

Աշնանային վալս

Մի մոռացկոտ անձրեւ
Ու մի երկչոտ քամի
Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ՝
Բնա՛վ չհարցնելով կամքն աշխարհի,
Ու գործի են անցել.
Շաղ են տալիս... տաղտուկ:

Տերեւները կրկին գործադուլ են անում,
Եւ ծառերի կանաչ գործարաններն արդեն
Էլ չեն արտադրում ո՛չ թթվածին,
Ո՛չ էլ դեղին շրշյուն,-
Հե՜րն անիծած:

Ու ծվատված ծանձրույթն ամենքիս մեջ
Երազում է հիմա հնավաճառ միայն:
Ա՜խ, թե պատուհանից մեկի ձայնը խռպոտ
Խուժեր սենյակ.
«Ձանձրո՜ւյթ, հին-մին ծանձրո՜ւյթ կառնեմ»...

Եւ ամենքըս ենք հիմա կիսով մենակ,
Եւ ամենքըս ենք հիմա կիսով տխուր՝
Հոգնած մե՛ր իսկ բոլոր շարժումներից,
Եւ ձեւերի՛ց ամեն
Եւ մտքերի՛ց բոլոր...

Օդը հաստանում է մառախուղով,
Ու մշուշով երկինքն է ցածրանում.
Որ բարակի թելը համբերության
Ու վեր բարձրանալիս ճիչ ճնգոցով հատվի:

Եւ ամենքըս հիմա վատ բաներ ենք հիշում.
Եւ ամենքըս հիմա հոռետես ենք դարձել,
Ամե՜ն ինչից զզված,
Զզված նաեւ մեզնի՛ց:
Եւ մեր քիթ ու մռթից քմծիծաղ է կաթում,
Ինչպես ամեն ծառից՝ կենտ-կենտ տերեւ,
Ինչպես ջրհորդանից՝ անձրեւաջուր կեղտոտ,
Քիվից՝ պղտոր կաթիլ,
Տտիպ տաղտուկ՝ հոգուց...
Կաթո՜ւկ-կաթո՜ւկ-կաթո՜ւկ,-
Հե՜րն անիծած...

Այս մոռացկոտ անձրեւն ու այս երկչոտ քամին,
Տխրությունն այս բարակ եւ տաղտուկն այս պարարտ,
Նաեւ վատն ու հոռին
Պարազույգ են կազմել
Ու պարում են-պարո՜ւմ-պարո՜ւմ հիմա
Մեր փողոցո՛ւմ,
Տա՛նը,
Մեր սենյակո՛ւմ նեղլիկ:

Երկրագունդն է պարում նույն վալսը հին ու նոր,
Տարվա եղանակներն անվերջ նույնն են պարում,
Նույնն է պարում կյա՛նքը,
Նույնն է պարում մի՛տքը:
Այս ի՜նչ խենթություն է,-
Հե՛րն անիծած...

Եվ ինչ է դեռ մնում, որ ի՜նչ անենք
(Ձանձրույթ առնող չկա.
Մենք ամենքս ենք ծախող):
Ձանձրույթի հետ կազմենք լավ պարազույգ
Ու պտըտվենք մե՛նք էլ,
Մե՛նք էլ պարենք
Խենթացնող այս վալսը՝ խենթի նման,
Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգո՛ւմ,-
Ի՜նչ ուզում է լինի.
Հե՛րն անիծած...

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ էջ 7

1920, սեպտեմբեր (օրը նշված չէ) – Նամակ Երեւանից Թիֆլիս Գարեգին Լեւոնյանին. հիշեցնելով *«Գեղարվեստ»*-ի առաջիկա համարի համար ուղարկած հինգ բանաստեղծությունների մասին՝ շարունակում է. *«Խնդրեմ այդ նյութերը չստացված համարեք, ես կուղարկեմ Ձեզ նոր նյութեր»:*

1920, 20 սեպտեմբեր – Նամակ Երեւանից Թիֆլիս Գարեգին Լեւոնյանին. կասկածելով նախորդ նամակը հասել է, թե ոչ՝ ավելացնում է. *«Հիմա խնդրում եմ ինչպես իմ հիշյալ վերջին նյութերը, այնպես էլ բոլոր այն նյութերը, որ Ձեզ մոտ կան՝ հրատարակելու համար աչքի առաջ չունենաք. ես Ձեզ նոր նյութեր կուղարկեմ, իսկ ե՞րբ – չգիտեմ: Իսկ իմ այդ նյութերը խնդրում եմ հարմար մեկի հետ ուղարկեք Երեւան՝ ինձ»:*

«Սոնետ», «Էմալե պրոֆիլը Ձեր», «Երբ ես տեսնում եմ Ձեզ», «Որպես հեռու բույրի», «Երբ ես տեսնում եմ դեմքը Ձեր» տպագրվել են *«Գեղարվեստ»*-ի 1921 թ. 7-րդ գրքում: Ինքնագրերը մնացել են *«Գեղարվեստ»*-ի խմբագրի պահոցում:

1920, 28 սեպտեմբեր – Վերսկսվում են թուրքական արշավանքները: ՀՀ տարածքի 2 մլն բնակչությունից հայեր էին 60 տոկոսը: Բանակի անձնակազմը՝ 40.000, որից 17.000-ը բանակից խուսափելու փորձ էր արել, իսկ 3.000 դարձել է դասալիք: Պատերազմը տեւում է 52 օր: Կարսի ճակատի հրամանատար է նշանակվում գեներալ Մովսես Սիլիկյանը, Կարսի ամրոցի պարետ՝ գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը: Բանակի հրամանատարը սպարապետ գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր:

Սեպտեմբերի 28-ին հրոսակախումբն արդեն Սարիղամիշում էր: Արշավանքը շարունակվում, նոր թափ է առնում հոկտտեմբերի կեսին եւ հասնում մինչեւ նոյեմբերի վերջը. Կարսի ամոթալի պարտությունից հետո ճանապարհը բաց ելավ դեպի Գյումրի:

1915-ի ցեղասպանությունը շարունակվում էր: Հոկտեմբերի 13-ին ՀՀ կառավարությանը Լեգրանը ներկայացնում է Սեւրի դաշնագրի պահանջներից հրաժարվելու վերջնագիր: Նոյեմբերի 24-ին Օհանջանյանի կառավարությունը հրաժարական է տալիս, նրան փոխարինում է Վրացյանը: Բայց արդեն թուրք-ռուսական դաշինքն իր սեւ գործն արել էր. նոյեմբերի 29-ին *«ազատագրական»* կարմիր բանակն արդեն Հայաստանում էր, իսկ դեկտեմբերի 2-ին հռչակվում է խորհրդային իշխանություն:

Սեպտեմբերի 30-ին եւ հոկտեմբերի 2-ին դասալիքների մասին ընդունվում են խիստ որոշումներ՝ մահապատիժ, դասալիքներին թաքցնողներին՝ մինչեւ կես տարի կալանք, աշխատանքի չընդունել, ընդհանուր բարոյազրկում: Կարսի անկման նախօրյակին կախաղան են հանվում շիրակցի չորս դասալիք:

Հայկական կողմից ռազմական գործողությունների մեջ կար անհամաձայնություն, բոլշեւիկների հրահրմամբ՝ անմիաբանություն՝ *«հեղափոխական»* թուրքը նրանց համար ավելի յուրային էր, քան ազգայնական դաշնակցականը:

1920, սեպտեմբեր – Դիմել է Կարինե Քոթանջյանին, ասել՝ թաքցրո՛ւ ձեռագրերիս կապոցը, ինձ հետեւում են. *«1920 թ. սեպտեմբերին էր, թե հոկտեմբերին, Եղիշեն, կարծեմ, արդեն վաղուց խզել էր կապերը այն մարդկանց հետ, որոնցից դրամ էր ստանում [նկատի ունի աշխատանքը կրթության եւ արվեստի նախարարությունում]: Մեկ օր ահա նա գալիս է որբանոց իր ողջ գրականությունը հավաքած. «Կարինե՛, խնդրում եմ պահիր սրանք, ինձ հետեւում են»: Կարինեի պատմելով՝ իբր նաեւ դրա համար Ամերկոմի գրասենյակում իրեն խիստ դիտողություն է արել դաշնակցության կոմիտեի քարտուղար դոկտոր Ռուբենը. «Բոլշեւիկյան որջ ես դարձրել որբանոցը. Չարենց, ինչ-որ աղջիկ...»* (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 46-47):

1920, սեպտեմբեր-հոկտեմբեր – Պրոլետպոետ Մ. Գերասիմովի արդեն մեջբերված տողերի տրամաբանությամբ՝ «Нет меры гордому дерзанию, // Мы — Вагнер, Винчи, Тициан» («Горн», 1920, ? 9-10, с. 17), ժամանակակիցները Ի. Սեւերյանինի մեջ տեսնում էին ե՛ւ Շեքսպիր, ե՛ւ Բայրոն, ով, իբր, բերում էր *«նոր պուշկինականություն»:* Այդպես, որովհետեւ դեռեւս 1912-ին գրած *«Էպիլոգ»* բանաստեղծության մեջ ինքն էր իրեն այդպես հռչակել.

Ես՝ հանճար Իգոր Սեւերյանինս,
Իմ հաղթանակով արբեցած եմ:
<...> Ես կատարեցի իմ գործը՝ հաղթելով գրականությանը:

Չմոռանանք, որ դեռեւս 1918-ին նա հռչակվել էր *«Պոետների արքա»:*

Այս ճանապարհին էին նաեւ հայ գրողները. Հակոբյանն իրեն համեմատում էր Գյոթեի հետ, Աբովը՝ Դանտեի՝ *«Իսկ ես մի նոր Դանթե... // Նետը փոխել եմ ռումբիե, ըստ Ն. Զարյանի՝ վաղվա պրոլետհանճարը կգա «Ավելի՛, քան Պուշկին, Հոմերոս»:*

1920, 5-11 հոկտեմբեր – Մոսկվայում հրավիրվում է պրոլետ կուլտի I համագումարը: Ձեւավորվել է 1917 թվականին՝ պրոլետարական մշակույթ ստեղծելու ծրագրով: Ներգրավված էին տեսաբաններ եւ գրողներ՝ Վ. Կիրիլով, Մ. Գերասիմով, Ի. Ֆիլիպչենկո, Ս. Օբրադովիչ, Ա. Բոգդանով, Պ. Լեբեդեւ-Պոլյանսկի, Վ. Պլետնեւ... Պահանջում էին՝ դասակարգային մոտեցում, կոլեկտիվ գիտակցություն՝ *«ես»*-ին հակադրվող *«մենք»*, աշխատանք, գործարան, մեքենա, երկաթ, աշխատավորական միջավայր: Գրողը գրականություն կարող է մտնել միայն բանվորական աշխարհից: Ժխտում էին դասական ժառանգությունը, ուղեկից գրողներին, պաշտպանում *«Թեկուզ երեք փսլնքոտ, բայց մերը»* պնդաճակատ սկզբունքը եւ հասնում *«կոմսնապարծության»:*

Հանդես գալով այս կապակցությամբ՝ Լենինը կտրականապես ժխտել է հատուկ պրոլետարական մշակույթ ստեղծելու գաղափարը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քննարկմանը ներկայացրած բանաձեւի նախագծի 4-րդ եւ 5-րդ կետերում առաջարկում է յուրացնել եւ վերամշակել «այն ամենը, ինչ արժեքավոր է մարդկային մտքի եւ կուլտուրայի ավելի քան երկուհազարամյա զարգացման մեջ: Միայն այդ հիման վրա եւ այդ իսկ ուղղությամբ տարվելիք հետագա աշխատանքը <...> կարող է ճանաչվել որպես իրոք պրոլետարական կուլտուրայի զարգացումե: Պրոլետկուլտը պետք է ամենավճռական կերպով մերժի՝ *«...որպես տեսականորեն սխալ եւ գործնականորեն վնասակար՝ իր կուլտուրան հորինելու, իր առանձնացված կազմակերպությունների մեջ ամփոփվելու <...> Պրոլետկուլտի «ինքնավարություն» սահմանելու ամեն մի փորձ եւ այլն»* (Լենին, ԵԼԺ, 41, էջ 336-337):

1922 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին այս հարցերի շուրջ *«Պրավդա»*-ում ծավալված բանավեճի առթիվ նա պրոլետկուլտը համարեց պրոլետարական մշակույթին խորթ ուղղություն:

Նույն դիրքորոշումն ուներ Լունաչարսկին, ով 1918 թ. դեկտեմբերի 29-ին Պետրոգրադի հանրահավաքում, ուր քննարկվում էր *«Հին ու նոր արվեստը հարցը, հայտարարել է. «Մենք չենք ցանկանում խորտակել հին արվեստի հուշարձանները եւ ոչ ոքի թույլ չենք տա դա անել»:*

Պրոլետկուլտը հրատարակում էր *«Պրոլետարսկայա կուլտուրա», «Գորն», «Մոլոդայա գվարդիա»* ամսագրերը: Հայերեն են թարգմանվում Ֆրիչեի *«Պրոլետարական պոեզիա»* (Մ.,1918), Բոգդանովի *«Գեղարվեստը եւ բանվոր դասակարգը»* (Մ., 1920) գրքերը, 1919-ին Թիֆլիսում Ս. Երզնկյանի խմբագրությամբ ռուսերեն լույս է տեսնում *«Պրոլետարսկայա կուլտուրա»* ամսագիրը, 1921-ին Թիֆլիսի *«Պրոլետկուլտ»* հրատարակչությունը լույս է ընծայում *«Պրոլետարական ստեղծագործություն»* ժողովածուն:

Այս գաղափարների իրավահաջորդը Հայաստանում դառնում է ՀՊԳԱ-ն, Թիֆլիսում՝ Հ. Հակոբյանը, Մոսկվայում՝ Գ. Հայկունին: Նրանք լույս են ընծայում իրենց պարբերականները՝ *«Մուրճ», «Դիրքերում», «Քուրա»:*

Պրոլետկուլտը գոյատեւել է մինչեւ 1932 թվականը, 1934-ին լուծվել գրողների նորաստեղծ կազմակերպության մեջ՝ պահպանելով իր վտանգավոր գաղափարական էությունն ու հեգեմոնիան:

1920, 6 հոկտեմբեր – Երեւանում գրում է *«Մահվան տեսիլ»* եղերերգը: Տպագրվել է Եժ, I հատորում (1922)՝ *«Սիրելի Դավիթ Անանունին»* նվիրումով:

Օգտվելով մայիսյան ապստամբությունից հետո Հայաստանը խորապես ճարակած ներկուսակցական երկպառակություններից, ապստամբության կազմակերպիչների ձերբակալությունից, դատավարությունից ու օգոստոսի 15-ին գնդակահարություններից՝ Կարաբեքիրը, որ ամռանը ներքին խռովություններ էր հրահրում Կարսում, Բեյուք-Վեդիում, Շարուրում եւ այլուր, սեպտեմբերի 21-ին հարձակման է անցնում Օլթիի կողմից, սեպտեմբերի 29-ին գրավում Սարիղամիշը, հոկտեմբերի 128-ից շարունակում ավերիչ արշավանքները եւ հոկտեմբերի 30-ին գրավում Կարսը:

Չարենցի խոսքը տրոփում էր հայրենիքի պատմաքաղաքական իրադարձությունների շնչառությամբ, որի ամենացայտուն վկայությունն այս եղերերգն է: Իրական են ե՛ւ կախաղանի պատկերները, որոնք դասալիքներին պատժելու համար դրված էին Երեւանի, Կարսի հրապարակներում, ե՛ւ վերջին զոհի զգացողությունը:

Դասալիքներին պատժելու համար դրված կախաղանների մասին վկայությունները շատ են, *«Հայաստանի Հանրապետություն»* աշխատության մեջ գրում է նաեւ Վրացյանը: Ահա եւ Մահարին. *«Ռուսական եկեղեցու հետեւը՝քաղաքային բուլվարի մոտ երեկ կանգնեցրին մի կախաղան: Այսօր լույս տեսավ Չարենցի մի ցնցող բանաստեղծությունը՝ «Կախաղանը» վերնագրով [ե՛ւ այսօր լույս տեսնելը, ե՛ւ վերնագիրը վրիպումներ են]: Ոչ ոք թող չմոտենա կախաղանին, ես կբարձրանամ կախաղան, եւ թող բոլորը նայեն սառած աչքերիս եւ այնտեղ տեսնեն, ի՛մ հայրենիք, քո ապագան»* (Գ. Մահարի, *«Երիտասարդության սեմին»*, գլ. 37, Եժ, II, 1967, էջ 406):

«Որպես լքված թավջութակի ծգված մի լար». Սայաթ-Նովայի քամանչայից, Ջիվանու սազից հետո ջութակը՝ որպես պատկերի բաղադրիչ, Տերյանը բերեց: Մինչ այս բանաստեղծությունը Չարենցը երկու տեղ օգտագործել է: Իսկ այստեղ ջութակը (թավջութակ) ծգված մի լար է, որի պես *«Դողում է սիրտս կարոտով մի ահարկու»:* Չարենցի համար ազգային կյանքի հոգեբանական լարվածությունը վերածվեց ողբերգության, մինչ Տերյանի քնարերգության մեջ մնաց հոգին կեղեքող թախիծ. *«Չըգիտեմ որտեղի՞ց է գալիս // Ջութակի հեկեկանքը տրտում // Եվ լալիս է անվերջ ու լալիս // Եվ անվերջ ծավալվում իմ սրտում»* («Աշնան գիշեր»):

«Մահվան տեսիլ»-ի մեջ հնչում են նաեւ Տերյանի *«Երկիր Նաիրի»* շարքի արձագանքները. «Մշուշի միջից,- տեսի՞լ դյութական,- // Բացվում է կրկին Նաիրին տրտումե: Դյութական տեսիլքն այստեղ դառնում է մահվան տեսիլ, ցնորքի մշուշների խորքում իրական երկիրն էր:

Ինչպես այս, այնպես եւ նրա շատ այլ գործեր ունեն պատկերների կերտման նկարչականություն. ««Դանթեական առասպել»-ում նկարագրված պատերազմի արհավիրքներն իսպանական մեծ նկարիչ Ֆրանսիսկո Գոյայի օֆորտներն են հիշեցնում իրենց արտահայտչականությամբ: Իսկ «Մահվան տեսիլը» կարդալիս՝ Հիերոնիմ Բոսխի ճիվաղային մղձավանջներն են առաջդ կանգնում» (Միքայել Մազմանյան, *«Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»*, 1961, էջ 85):

Չարենցը վերջնականապես հաստատեց *«Կապուտաչյա հայրենիք»*-ից եկող, բոլորին հասցեագրված ռադիոպոեմներում շարունակվող, փորձության ժամին հաստատված ապրումակցությունը՝ հայրենիքի եւ բանաստեղծի ճակատագրերի միասնությունը:

1920, 11 հոկտեմբեր – *«Նոր խոսք»* շաբաթաթերթում (թիվ 8, շարունակությունը՝ թիվ 10, 25 հոկտեմբեր) տպագրվում է Սուրխաթյանի *«Ֆուտուրիզմը եւ հեղափոխությունը»* հոդվածը: Այն կարծիքն է հայտնում, որ, հանդես գալով պրոլետարիատի անունից, ֆուտուրիստները գրավեցին գրական իշխանությունը. *«Պրոլետարական ապագա գեղարվեստը ֆուտուրիզմի հետ չէ, նրա ճանապարհը անկախ է եւ տրամագծորեն հակառակ ուղղությամբ»:*

1920, 18-22 հոկտեմբեր – Գրողների համառուսաստանյան համագումարը հիմնադրում է պրոլետարական գրողների համառուսաստանյան ասոցիացիա՝ ВАПП (ՎԱՊՊ):

1920, 24 հոկտեմբեր – *«Հայաստանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետն ընդունված ուսանողների»* ցուցակում, որպես ունկնդիր, արձանագրված է Չարենցի անունը՝ *«2. Եղիշե Սողոմոնյան»,* անմիջապես նրանից հետո Գոհար Մալենցյանն է, ով հետագայում հուշեր է գրել *«Պրինցեսա մահ»* բանաստեղծության ստեղծման մասին (տես՝ *«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»,* 1986, էջ 146):

(շարունակելի)

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Փորձի՛ր լրացնել

Գիտություն, գրականություն, արվեստ...



Ուղղահայաց

1. Հայ թատրոնի եւ կինոյի դերասանուհի՝ ... Էլբակյան: **2.** Հայկական եւ քրդական դիցաբանության մեջ-չար ոգիներ, որոնք վնասում են ծննդկաններին եւ նորածիններին: **3.** Ուկրաինացի ժողովրդական, էստրադային երգչուհի՝ ... Լորակ: **4.** Ֆրանսիացի վիպասան եւ թատերագիր (1840-1897 թթ.)՝ Ալֆոնս ...: **6.** Իտալացի գրող: Առաջին իտալացի կինը, ով ստացել է Նոբելյան մրցանակի (1926 թ.): **8.** Հունական դիցաբանության հերոս՝ Օվկիանոսի եւ Տեթիսի որդին: **9.** *«... աղբյուր»* հայկական ֆիլմ, որն նկարահանվել է Մկրտիչ Արմենի համանուն վիպակի հիման վրա: **10.** Տարածված պար: **12.** Հայ քաղաքական մտքի Կիլիկյան դպրոցի նշանավոր ներկայացուցիչ՝ Վահրամ ...: **16.** Ֆրանսիացի հայտնի ֆուտբոլիստ եւ մարզիչ: **19.** Ֆրանսիացի գրող, *«Թերեզ Ռաքեն»* վեպի հեղինակը: **21.** Անձ, որ խաղում է թատրոնում, կինոյում: **23.** Գերմանացի գրող եւ քաղաքական գործիչ՝ Լուիզա ... (1814-1871 թթ.): **25.** Միջնադարյան մուսուլմանության կայսրությունների հիմնական մետաղադրամը: **29.** Ֆրանսիացի գրող, գրականության տեսաբան, հրապարակախոս (1766-1817 թթ.): **31.** Արամ Խաչատրյանի *«Դիմակահանդես»* բալետի հերոսուհիներից: **34.** Հայտնի ծրագրավորման լեզուներից: **35.** Լատիշ բանաստեղծ, դրամատուրգ՝ Յան ...: **39.** Նախկինում գյուղաքաղաք Գողթն գավառում, որտեղ տարբեր ժամանակներում կառուցվել են 12 եկեղեցի ու վանք: **40.** Խորհրդային մանկական գրող, *«Թիմուրը եւ իր ջոկատը»* ստեղծագործության հեղինակը: **41.** Հայ գրող, մանկավարժ (*«Հազարան Բլբուլ»*, *«Զանգի-Զրանգի»*, *«Անահիտ»*): **45.** Հաշվային տախտակ, որը կիրառվում էր թվաբանական հաշվարկները կատարելու համար՝ սկսած մ. թ. ա. 5-րդ դարից հին մշակույթներում: **47.** Հին Հունական դիցաբանության ռազմի աստվածը՝ Զեւսի եւ Հերայի որդին: **48.** Գերմանացի կոմպոզիտոր՝ Սեբաստիան ...: **49.** Շեքսպիրյան արքա:

Հորիզոնական

5. Հնդիկ շախմատիստ, աշխարհի չեմպիոն: **7.** Ռուս գեղանկարիչ, *«տրամադրության բնանկարի»* վարպետ՝ Իսահակ ...: **9.** Հույն ճարտարագետ, մաթեմատիկոս եւ գիտնական: **11.** Բրիտանացի գրող, գիտնական, գյուտարար՝ Արթուր ...: **13.** Հայ բանաստեղծ, գրականագետ, ով թաղված է հայրենի տան բակում: **14.** Գյուղ Կոտայքի մարզում, ուր գտնվում է հեթանոսական տաճար: **15.** Հայ պատմաբան, բյուզանդագետ եւ բանասեր՝ Նիկողայոս ...: **17.** Ֆրանսիացի գրող, գրականության բնագավառում, Նոբելյան մրցանակի դափնեկիր, *«Ակացիան»*, *«Քամին»* վեպերի հեղինակը՝ Կլոդ ...: **18.** Գերմանացի ֆիզիկոս,- քվանտային ֆիզիկայի հիմնադիր՝ Մաքս ...: **20.** Հայտնի հույն օրենսգիր եւ բանաստեղծ: Հին հունաստանի յոթ իմաստուններից, (մ. թ. ա. 638-մ. թ.ա. 559): **22.** Անգլիացի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս: Նրա անունով է կոչվում կինեմատիկական մածուցիկության միավորը: **24.** Հայ արձակագիր Արազի (Մովսես Հարությունյան) ստեղծագործություններից: **26.** Հայ բանաստեղծ, մատենագիր՝ ... Շնորհալի (1100-1173 թթ.): **27.** Անտիկ պոեզիայի ժանրերից: Կյանքի երանելի վիճակը պատկերող ստեղծագործություն՝ հովվերգության կամ ...: **28.** Հայ արձակագիր, կինոսցենարիստ (անունը): (*«Աշնան արեւը»*, *«Մենք ենք մեր սարերը»*): **29.** Վարդգես Սուրենյանցի հայտնի կտավներից: **30.** Հայ բանաստեղծ, արձակագիր, Վահրամ Գաբուզյանի գրական կեղծանունը: **32.** Ավստրիացի գրող եւ հումանիստ, *«Մուսա լեռան 40 օրը»* վեպի հեղինակը՝ ... Վերֆել: **33.** Թատերական ժանր: **36.** Ռուս արձակագիր, գրականության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ Իվան ... (1870-1953 թթ.): **37.** Բազմակողմանի զրագացած բենգալացի, գրականության Նոբելյան մրցանակակի առաջին ոչ եվրոպացի դափնեկիրը՝ Ռաբինդրանաթ ...: **38.** Սփյուռքահայ գրականության հիմնադիրներից, *«Նահանջ առանց երգի»* վեպի հեղինակը՝ ... Շահնուր: **42.** Գերմանացի կոմպոզիտոր, դաշնակահար՝ Յոհաննես ...: **43.** Հայ գրող Մուրացանի Դրամաներից: **44.** Կիլիկյան դպրոցի միջնադարյան հայ մանրանկարիչ՝ Սարգիս ...: **46.** Հունական առասպելների մեծագույն կախարդուհին, Յանսոնի, հետագայուն էգնիսի կինը: **50.** Առաջին հայկական գեղարվեստական ֆիլմը: Նկարահանվել է՝ ըստ Ա. Շիրվանզադեի համանուն դրամայի: **51.** 9-10-րդ հայ պատմիչ՝ Թովմա ...: **52.** Արձակ ստեղծագործության տեսակ:

Կազմեց՝ Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի ՀՀ ԿԳՄՍՆ *«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ»* ՊՈԱԿ-ի ՆԶՊ դասախոսի թափուր տեղի համար 1,5 դրույքով:

Դասախոսի աշխատավարձը հաշվարկվում է ըստ դասաբաշխման եւ մանկավարժական ստաժի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անց է կացվելու բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին ներկայացնում է .

1. Գրավոր դիմում (Ձեւ 1),

2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7. Արական սեռի ներկայացուցիչները՝ նաեւ զինգրքույկ (բնօրինակը եւ պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 11:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 21-ին՝ ժամը 14:30-ին,*** Աբովյանի պետական էներգետիկական քոլեջում, հասցեն՝ ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222) 2-04-26 հեռախոսահամարով:

էլեկտրոնային հասցեն՝ apeq@list.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հրուշակեղենի տեխնոլոգիա»* (284 դասաժամ), *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* (101 դասաժամ) մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների, *«հանրահաշիվ» եւ «Երկրաչափություն»* (490 դասաժամ) առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2022 թ. նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 18-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցե՝ ք.Երեւան, Վ.Ավանեսովի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (091) 11-34-98, (077) 11-61-15 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի հ. 98 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (11 դասաժամ), անգլերենի (14 դասաժամ), քիմիայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

